



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

mm

1028

370.1

N 11 u

MAR 2010

A-37

ux

N 107

ԵՐԵՒԱՆԵՐԻ ԱՌԻՐԵՆՑ

ԾՆՈՂՔ ՊԱՐՏԱԻՈՐՈՒԹԻՒՆ- ՆԵՐԸ

ԳՐԵՑ Թ. Հ. ԲԱՐՐՕ

ՆԱԽԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1878 թ. արձարող Մարտի 13 (հունիսի 1) 1878 թ.

Տարրական կրթութեան ընկերութիւնից

պատուած գործ

ԹԱՐԳՄԱՆՆՑ ՅՈՒՍԵՔԵՐԵՆԻՑ

ՍԱՐԳԻՍ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ ՏԷՐ ԳՐԻԳՈՐԵԱՆՑ

Ց Փ Խ Ի Ս

Ի ՏԳԱՐԱՆԻ ՀԱՄԱՐՁՈՒՄԱՑ ԷՆՅԻԱՃԵԱՆՑ

1878

Աղջակ Երանյան
Ընկերության

Տպագրական սխալներ

Էջ	տող	վնասակ	ուղղիչ
1	3	պարք	պարտ
54	7	վա. դի	վանդի
63	2	ինել	լինել
69	10	նո ա	նորա
72	1	Հաճել	Հաճելի
73	1	սիլ	լսել
82	11	Հասակուս	Հասակում
89	22	բաղխել	բաշխել

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՏԱՆԻՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ
 ԳՐԱԿԱՆԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ
 ԲՆԱԿԱՆԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ



... զի զգրկոյ փոքրիկ զգրկոյ լծ յոսմ քան զ...
 ... զգրկոյ փոքրիկ զգրկոյ լծ յոսմ քան զ...
ԵՐԵՎԱՆԻ ԵՐԻ ԱՌ ԻՐԵՆՑ ԾՆՈՂՔ

ՊԱՐՏԱՒՈՐԱԿՈՒԻՆՆԵՐԸ
 ... յանձնողը, բնական կերպով զգրկոյ փոքրիկ զգրկոյ լծ յոսմ քան զ...
ՈՐԿՈՑ ԻՐԵՆՑ ԾՆՈՂՔԻՆ ՊԱՐՔ ԵՐԱԽՏԱԳՐԱԿԱՆ

... ամենա մեծագույն զգրկոյ փոքրիկ զգրկոյ լծ յոսմ քան զ...
 ... ամենա մեծագույն զգրկոյ փոքրիկ զգրկոյ լծ յոսմ քան զ...

Աստուած իւր չորրորդ պատուիրանքով ասել է. «Պէտք է պատուես **Հօրդ ու մօրդ**, որպէս զի երկայնակեաց լինիս:»

Այն օրինագիրքը, որին Ֆրանսիացիք **Հնա-գանդել պարտական են**, պարունակում է սոյն յօդուածը. «Որդին, իւր ամէն **Հասակում**, պարտաւոր է յաբղել և պատուել **Հօրն ու մօրը**. պիտի **Հըպատուակի** նոցա՝ իշխանութեանը մինչև իւր **չափահաս դառնալը**:»

Աւրեմն Աստուծոյ օրէնքը և երկրի օրէնքը մի-
 ևնոյնն են պատուիրում. կրօնքն ու հայրենիքը, ու-
 բոնցն է մեր վարք ու բարքին ուղղութիւն տալու
 իրաւունքը, մեր վրայ են դնում զոյն այդ պարտա-
 կանութիւնը:

Բայց թէ և Աստուծոյ պատուիրանը և մեր
 երկրի այդ օրէնքը յայտնի չլինէին մեզ, դարձեալ
 մեր ծնողքը պատուելու պարտականութիւնը մեզ
 համար սուրբ պէտք է լինէր, ըստորում գրուած է
 նա մեր սրտի մէջ, մեր բնութեան օրէնքներէից մէկն
 է նա:

Հո՛ւսկ՝ երախտամոռութիւնը ախտերի ամենա-
 գարշելին է, և երախտագիտութիւնը՝ պարտքերի ա-
 մենասուրբը:

Արդ, աւելի ո՛ւմ երախտագէտ պէտք է լի-
 նինք, եթէ ոչ մեր հօրն ու մօրը:

Մենք, չկայինք. և Աստուծմէ վերջը՝ նորա են
 մեր գոյութեան պատճառը. նոցա ձեռքով է որ մենք
 մասնակից ենք Նախախնամութիւնից մարդկային սե-
 ւին շնորհուած բարիքներին. նոցանով է որ մենք
 մարդ ենք, բրիտանոնայ՝ և Ֆրանսիացի. նոցա շնորհ-
 քով է որ Աստուծուն ճանաչելու, նորան ծա-
 ոայելու և նորանից առաքինի մարդուն խոստացուած

վարձատրութիւնները վայելելու բաղաւորութիւնն
 ունինք մենք:

Տկար ենք ծնունում մենք և ամէն տեսակ չարի-
 քի ձեռք խաղալիք. մեր ծնողք մեզ այդ ամենայ
 պահպանում են մի միշտ անփոփոխ զթոյլ և հո-
 զատարութեամբ: Ամէն բանից զուրկ ենք ծնուում.
 մեր ծնողք անդադար անխնայ տալիս են մեզ հար-
 կաւոր օգնութիւնները: Տղէա ենք ծնունում. մեր
 ծնողք կազմում են մեր դատողութիւնը, մեզ ու-
 սուցանում են իրերը ճանաչել և խօսել: Այն ամէն
 բան՝ որ աշխարհ գալիս չունինք մենք, և որ պէտք
 են մեզ, տրուում է մեզ նոցա խնամքով՝ օրաւոր
 որ մեծանում ենք:

Մեր ծնուելուց իսկ առաջ՝ մեր հայրը մտա-
 ծում էր որ յողովէ բոլոր մեզ հարկաւորելիքները.
 մեր օգտի համար իրեն հնարաւոր եղած տնտեսու-
 թիւնն անում էր. շատ բանից զրկում էր իւր անձը
 որ մեզ ոչինչ պակաս չլինի:

Մեր մայրը թերեւս աւելի էլ է անում մեզ
 համար: Նա երեխային կենք է տալիս, կաթ է տա-
 լիս, և ամէն խնամք անպակաս է անում նորանից:
 Այլ նորածին մանուկը դեռ իւր համար այնքան
 զուժ առատացնողին չի էլ ճանաչում, իւր պէտ-
 քերն իմացնելու կարող չէ դեռ. բայց մայրն աշխա-

տում է գուշակել ինչ որ նորան հարկաւոր է, ինչ որ նորան ակորժ է. անդադար տազնապում է զվշեր ցերեկ նորա համար, առանց անպամ գիտնայութե ինչ հատուցում պիտի ստանայ այնքան քաշածի փոխարէն:

Իրենց զաւակի հիւանդութեան ժամանակ հայրն ու մայրը ամէն կարելի ջանքու խնամք հանապազորդ անում են. անփոյթ են թողնում իրենց անձի առողջութիւնը՝ որ ինչ է հսկեն թէ նորանը վերահաստատուի: Միշտ դողում են չլինի՛ թէ մի բան պակսի նորան, և իրենց առ Աստուած աղօթքովը անդադար պաղատում են նորան՝ որ իւր բարիքը բաշխէ իրենց որդուն:

Երբ արդէն ընդունակ է լինում զասեր առնելու, շտապում են սովորեցնել նորան այն՝ ինչ որ մի օր նորան օգտակար կարող է լինել: Ուսումնարան են ղրկում նորան, և ամենեին չեն ցաւում նորա կըրթութեան համար ծախսածների վրայ:

Ոչ մի միջոց անտես չեն անում՝ որ նորան առաքինի կազմեն, և կրօնքի, բարութեան ու պատուի գզացմունքները սրտի մէջ ծնուցանեն:

Հասցնում են նորան այն վիճակին՝ ուր նա պատուաւոր կերպով կարող է իւր կենցաղավարութիւնն անել, իրենց կեանքի պայմանի ու կարողու-

թեան չափով: Երբեմն ևս իրենց կարիքէն վեր գոհեր են անում որ նորան մի լաւագոյն բաղդի տիրացնեն:

Երբ ամուսնանալու հասակն հասնում է, իրենց գոյքի մի մասը նորան բաժին են հանում, և իրենց մնացած մասն էլ խնամքով մատակարարում են, որ այն էլ իրենց մահից յետոյ նորան մնայ:

Վերջապէս նոցա շարունակ հոգսը իրենց որդու բաղդաւորութիւնն է. մի յարատե գութ ունին նորա վրայ, և կարծես նորա համար միայն է որ շունչ են քաշում:

Ինչպէս ուրեմն մի որդի կը կարողանայ չպահպանել իւր սրտում իւր հօրն ու մօր համար, քանի որ կենդանի է ինքը, ամենաջերմ և ամենախորին երախտագիտութիւն:

ԶԿՆՈՐՍԸ ԵՒ ԻՒՐ ՏՂԱՆ:

Արդէն տարիքն առած մի Նիէպպեցի պատուական ձկնորս մի աղայ ունէր Պօղոս անունով:

Սա, առանց շատ էլ աշխատելու և առանց իւր կեանքը ստէպ վտանգի մէջ դնելու պէկոծեալ ծովը վրայ՝ մրկալից գիշերներով, կարող էր զիւր

ապրիլ . բայց իւր տղին օգտակար լինելու համար՝
յօժարութեամբ ամէն աշխատանք յանձն էր առնու-
նում և ամէն վտանգի առաջ վազում :

Պօղոսի մայրը գուժ ու խնամքով լի էր որ-
դու համար: Երկու անգամ, երեսայութեան ժամա-
նակ, բռնուեցաւ խիստ վտանգաւոր հիւանդու-
թեամբ, որից անպատճառ կը տարուէր՝ առանց մօրը
խնամքներին ու անձնագործութեանը: Կարելի է ասել որ
շատ անգամ իւր մօրն եղաւ պարտական իւր կեանքը:

Ուսանելու ընդունակ լինելու օրից՝ պատուական ծը-
նող քընորան ուսումնարան զրկեցին: Պօղոսն արագ արագ
յառաջ դիմեց: Գատիարալը, նորա յաջողութեան
վրայ հիացած, յորդորեց իւր աշակերտի ծնողքին որ
նորա կրթութիւնը որքան կարող են յառաջ տանել
տան: Հաւան եղան նորա խօսքին, և, որպէս զի ծախսը
ձարեն, կրկնապատկեցին իրենց աշխատին ու անտեսելը:

Յաճախ բարի հայրն ու զթոտ մայրը հերիք
էին համարում իրենց ծաշին մի կտոր հաց և մի
բաժակ գարեջուր երկսի համար, որ կարողանան Պօ-
ղոսի վարժապետների վարձքը տալ ու իւր ուսման
համար էլ հարկաւոր գրքերը գնել:

Աստուած օրհնեց այդ պատուական ծնողքի
զոհը և վարձատրեց նոցա որդու բարի վարքը: Պօ-

ղոսը քաջ՝ միանգամայն և հմուտ նաւաստի եղաւ:
Շատ զեղեցիկ գործերով նշանաւոր լինելուց յետոյ՝
ընդունուեցաւ Տէրութեան նաւատորմի ծառայու-
թեան մէջ պաշտօնաւոր, և փոքր ժամանակի մէջ
բարձր աստիճանի հասաւ:

Այդ ժամանակ վարձեց նա իւր ծնողքի հա-
մար մի սիրուն պարտիզաւոր տուն, և փութաց նո-
ցա համար հայթայթել բոլոր ինչ որ նոցա ծերօ-
րերը երջանկացնել կարող էր:

Ծովի վրայ չեղած ժամանակը՝ նոցա հետ էր
բնակում, ինքն իսկ ծառայում էր նոցա, և իւր
բոլոր երեկոները նոցա հետ էր անցկացնում: Միշտ
այնքան յարգում էր նոցա՝ որքան և սիրում: Մեծ
փոյթ ունէր որ իրեն այցելութեան եկողները նոցա
էլ հաւասարապէս պատուեն, և երբէք անանց նոցա
հաղորդակցութեանը ոչ մի հաճոյք չվայելեց:

Մերելի որդեակի, գոչում էին յաճախ պատ-
կուելի ծնողքը՝ որքան պարտական ենք մենք քեզ:

— Գուր ինձ ոչինչ պարտական չէք, ե՛ս եմ
ամէն բան ձեզ պարտական: Ես ձեզ պարտական եմ
ինչ որ եմ, ինչ որ ունիմ և ինչ որ գիտեմ: Որ-
քան էլ որ ձեռքէս եկածն անեմ, դարձեալ բնաւ
չեմ կարող արժանապէս հատուցանել իմ այնքան
սրբազան պարտը:»

ՈՐԴԻՒԱԿԱՆ ՍԷՐ:

Ամէն մարդուց վեր մենք մեր հօրն ու մօրն ենք պարտական սիրել, որովհետև երբէք չենք ընդունում ուրիշից մի ծառայութիւն՝ որ նոցա բարերարութիւններին հաւասարուել կարենայ:

Նոյնպէս ևս՝ երբէք մեր բոլոր կեանքում չենք կարող գտնել մի մարդ, որ մեզ այնքան սիրէ՝ որքան սիրած են մեզ մեր ծնողքը:

Այն բարեկամները, որ մենք յետոյ մեզ ընտրելու ենք, որքան էլ ջերմ և անկեղծ լինի նոցա սէրը, կարող են մեզ թողնել հեռանալ և կամ մատնել. բացակայութիւնը կամ զերդաստանական նոր նոր կապեր, կամ նորանոր բարեկամութիւններ, կարող են այնպէս անել որ նոքա մեզ մոռանան. բայց մի հայր ու մայր բնաւ երբէք չեն մատնում, երեսի վրայ չեն թողնում, չեն մոռանում իրենց զաւակին:

Բարեկամի կամ պաշտպանի կորուստը կարող է երբեմն փոխարինուիլ. բայց լաւ հօր ու մօր կորուստը անդառնալի է. եթէ դժբաղդարար կորուսիք նոցա, ուրիշին նոցա տեղ դնել կարող չենք: Եր-

մարտեկիսի կամ սրտ պղծակ յոյս դնի որ մարդ էք չենք գտնիլ մարդ՝ որ լինի մեզ համար այն ինչ որ նոքա էին:

Ուրեմն գորովով սիրենք մեր ծնողքին: Որքան աւելի սիրենք նոցա, այնքան աւելի յոյս կարող ենք ունենալ իմաստուն և յարգելի լինելու. այդ սէրն՝ որ Աստուած ինքն է մեզ պատուիրում՝ դիւրաւ միաբանում է առաքինութեան սիրոյ հետ, ըստորում որքան աւելի սիրենք մեր ծնողքին՝ այնքան աւելի պիտի աշխատինք նոցա գոհ անելու. իսկ նոցա գոհ անել՝ մեր բարի վարքովը միայն կարող ենք:

Սիրենք մեր ծնողքին ինչպէս որ են, ինչպէս որ Աստուած տուել է մեզ. ոչ թէ միայն նոցա անձը սիրենք, այլ և նոցա վիճակը և նոցա պայմանը:

Եթէ մեր ծնողքը աղքատ, անփառունակ, ապերջանիկ են, այդ պատճառով մենք պէտք չէ ցանկանանք աւելի հարուստ, աւելի պատուուած, աւելի երջանիկ զերդաստանի մէջ ծնուած լինելը. դա մի մեղանշական մի ամբարիշտ զգացմունք կը լինէր, մի հայհոյանք կը լինէր նախախնամութեան դէմ: Նա մանաւանդ պարտաւոր ենք սիրել նոցա աւելի ևս եթէ կարելի է, որովհետև մեզ համար ու մեր պատճառով աւելի շատ կարօտութիւն ու ցաւ քաշած կը լինին նոքա. և մէկ էլ՝ որ կարելի է մե-

զուժն ու մեր բարի վարքը նոցա միակ միթարան-
քը լինին իրենց խեղճութեան մէջ:

Չնախանձինք ուրեմն այն տղոց վրայ որոնց
Տնորքը աւելի հարուստ և աւելի երջանիկ են մե-
րերից, այլ այնպէս աննշոր ոչ մի տղայ մեզնից
աւելի չխարոզանայ զոչ ու բաղդաւոր անել իւր ծը-
նողքին:

ՄԻՐՄԻ

Մի ամարային երեկոյ պատանի Մերտիլը իւր
անակից դուրս եկել ու ճեմում էր մի լծակի մօտիկ,
որի ջրերը երեսին ցորանում էր լուսնի փայլը: Մեղմ
լուսով պայծառացած դաշտի հանդարտութիւնը, ե-
րեկոյի գեղեցիկութիւնը, տխակի անուշ դալլայիկը խո-
րատուցեցին նորան առ ժամանակ մի ակտրժելի մը-
տաւոր որոճմունքի մէջ:

Յետոյ յիս դարձաւ իւր բնակարանի մուտքը
հովանաւորող դալարաթուփ որթերի խորանի տակ,
ուր գտաւ իւր ծերունի հօրն, որ ընկողմնած կա-
նանչի վրայ հանդարտիկ բնում էր:

Պատանին սիրտը շարժուած կանգ է առնում
ու սկսում հօրը նայել. մի հեշտալի զգացմունք զը-

րաւում է իւր սիրտը՝ նորան նայելիս: Աչքը ան-
թարթ նորա վրայ շիտիած ունէր. միայն մերթ ընդ
մերթ տերեւների միջեց նայում էր դէպի վեր երկինք,
և ուրախութեան ու սիրոյ արտաւնայներ զլորուում
էին աչքերէն ի վայր: Եւ ասում էր.

«Մի դու, որիդ Աստուծակ ետքը ամենից վեր
եմ սիրում, հայրիկ իմ, ո՞րքան անուշ հանդուում
ես. ինչ խաղաղ է արդարի քունը: Անշուշտ այս
երեկոյ դուրս եկած կը լինէիր անից՝ որ աղօթքդ
Աստուծուն մատուցանես, ու անուշիկ քունն յանկարճ
վրայ է հասել:

«Ինձ համար էլ անշուշտ աղօթեցիր. ինչ եր-
ջանիկ եմ ես: Աստուած քու աղօթքդ լսում է: Եթէ
մեր արտերն առատ հնձքով լցուն են և մեր արօտ-
ներն անթիւ հօտեր են կշտացնում, ասել է թէ
կրկնքի օրհնէնքն է մեր ամենիս վրայ՝ քու առա-
քինութեանդ պատճառով:

«Եթէ գորովուած իմ քու ծերութեանդ վրայ
տարած խնամքներովս, դու ուրախութեան ար-
տաւնայներ ես իջեցնում, և աչքերդ դէպ երկինք
համբառնալով նորա օրհնութիւնն ես կանչում իմ
վրայ, ո՞հ, ինչ երջանկութիւն այդ ժամանակ թըր-
թեցնում է իմ սիրտս:

«Այդ ինչ ժպիտ քնիդ մէջ: Ա՛հ, անշուշտ»

երազումդ միտքդ է դալիս այն բարի գործերէն մէկնումէկը, որ դու այնքան յաճախ անում ես . . . Բայց քեզ վտանգաւոր է այդ հասակիդ մէջ զիշերուայ ցօղն տակ ու զով քամու առաջ բաց քնիր:՝

Այս ասելով՝ համբուրում է նորա ճակատն որ հանդարտիկ զարթնի նա, ապա առնում տուն է տանում որ աւելի լաւ քնեցնէ:

ՈՐԴԻԱԿԱՆ ԵՐԿԻԻՂ. ՀՊԱՏԱԿՈՒԹԻՒՆ,

ՀՆԱԶԱՆԴՈՒԹԻՒՆ

Որովհետեւ սիրում ենք մեր ծնողքին, ուրեմն պէտք է զգուշանանք նոցա տհաճեցնելն և ցաւեցնելն, այսինքն պէտք է երկիւղ կրենք նոցանից:

Մեր ծնողքից երկիւղ կրելն այն է որ ամենայն խնամքով խոյս տանք նոցա տհաճութիւն պատճառելուց, որ այն կերպ յարմարենք մեր գործքերն ու խօսքերը՝ որ միշտ արժանի լինինք նոցա հաւանութեանը:

Ուստի որդու երկիւղը սարբկի երկիւղ է: Ըստարուկը վախենում է չլինի թէ իւր տէրն իրեն պատիժ տայ. բայց որդին կասկածում է որ մի՞ գուցէ թէ հօրն ու մօրը տհաճութիւն պատճառէ:

Ահա այդպէս պիտի վախենանք մեր ծնողքից. այդ վախը ոչ թէ միայն կատարելապէս միաբան է սիրոյ և զթոյ հետ, այլ և անբաժան իսկ է նոցանից, ըստ որում նա՝ որ անկեղծաբար սիրում է իւր ծնողքին՝ սոսկում է նոցա վշտացնելուց:

Եթէ երբեմն տեսնենք թէ մեր ծնողք շատ ներողամիտ են առ մեզ, մենք այդով պէտք չէ զեղծանինք. և երբ տեսնենք թէ շատ կակուղ են մեզ մեր յանցանքը ներելու, այդով պէտք չէ որ մենք դադարենք նոցանից երկիւղ կրելուց: Վասն զի այդ վերին ծայր ներողամտութիւնը, որ յառաջ է գալիս նոցա մեծ բարութիւնիցը, պէտք է մանաւանդ մեզ համար մի նոր աւելի գառնայ հեռու կենալու այն ամէն բանից որ կարող է նոցա վիշտ պատճառել:

Ուստի պէտք է միշտ հպատակ լինել:

Մէկը իւր հօրն ու մօրն հպատակ է, երբ նոցա կամքին է յարմարուում. առանց տրտընջելու և նա իսկ փութով ու հաճութեամբ:

Երեսան պարտաւոր է զթոտ և երկիւղած հեղութեամբ ընդունիլ ինչ որ նոցանից գայ, խորքով իրեն յիշուցնելով իր անբաժանելի կապը նոցա հետ:

հոգի, յորդոր, ազգարարութիւն, յանդիմանութիւն, սաստ, պատիժ:

Վասնզի ծնողքի առ իրենց զաւակն ունեցած խստութիւնը փաստ է իրենց առ նա սիրոյն. նոքա պարտական են առաջնորդել նորան բարի ճանապարհով. դա նոցա իրաւունք ու նոցա պարտքն է: Այդ պարտականութիւնը նոցա վրայ գրել են բնութիւնը, կրօնքը և հայրենիքը. արդար է ուրեմն որ մանուկը նոցա կամքին հպատակի առանց այլևայլութեան:

Հեղութեամբ պէտք է լսել յանդիմանութիւնները. երբէք ընդդիմախօսել պէտք չէ, թող թէ զոռոզանալ կամ յանդիմութիւն անել. բառ որում շատ յայտնի է թէ այն օրան՝ որ զոռոզ կամ յանդուզն է իւր հօրն ու մօր հետ վարուելիս, արժանի է խորին արհամարհանքի և խիստ պատիժներին:

Ուրեմն ստացած յանդիմանութիւններին պէտք է պատասխանել միայն անկեղծ խոստանալով որ այնուհետեւ էլ նոցա արժանի բաներ չեն գործուիլ: Այս նպատակով պէտք է հաստատ առաջադրութիւն անել և խօսքը պահել: շերիք չէ սակը, մի չար բանի վրայ խօսելիս, «էլ չեմ անիլ» այլ պէտք է էլ շանել:

Ծնողք երբեմն հարկադրուած են իրենց երե-

խային պատժել: Նոցա այդպէս վարուիլը միշտ նորա բարին ցանկանալու համար է և իրենց նորա վրայ ունեցած զթոյ առատութիւնից է: Եթէ նորա պակասութիւնները ուղղուէ համար նորա իրենց ձեռքից եկած բոլոր հնարքները չբանեցնեն, ցոյց կուտան այդպիսով որ նոքա նորան ինչպէս որպէս քրն է չեն սիրում:

Երեխան, որին իւր ծնողք պատժում են, պէտք չէ աշխատի փախուստ տալ պատժից. նա և այդ պատճառով պէտք չէ բարկանայ ծնողքի դէմ, կամ կասկածի նոցա առ ինքն ունեցած զթոյ վրայ. այլ այդ պատժի մէջ նոցա սիրոյ միտք ապացոյց պէտք է ակննէ, և խոնարհութեամբ ընդունի այն, և հաստատ առաջադրէ որ այլ ևս արժանի չլինի նորան:

Երեխան պէտք է ցաւի կրած պատժի համար, ոչ թէ այն պատճառով որ մի բանից զրկուում կամ թէ ցաւ է զգում, այլ այն պատճառով որ սհաճութիւն է պատճառում իւր ծնողքին և վըշտացնում է նոցա սիրաբ ամէն անգամ երբ նոքա ստիպուած են լինում իրեն պատժելու:

Պէտք է ամէն ջանք ի գործ դնէ նոցա այդ վիշտը չտարու. իսկ երբ դժբախտաբար անկարա-

նում է, ու նոքա այդ դառն հարկը վրաներն են առնում իրեն պատժելու, ինքը գոհ պէտք է լինի նոցանից ու շնորհակալ՝ ինչպէս մի նոր բարիքի համար:

Մի երեխայ որ երկիւղ է կրում իւր ծնողքից ու հպատակ է նոցա՝ միշտ հնազանդ է, այսինքն թէ անում է ինչ որ իւր ծնողքն իրեն հրամայում են և զգուշանում է այն ամէն բանից որ արգելում են:

Բաւական չէ ճշգրութեամբ հնազանդիլը, այլ և յօժարութեամբ պէտք է հնազանդիլ, այսինքն սրտանց հպատակիլ ծնողքի պատուէրներին, որ պէտք է համարել բարի, արդար և իմաստուն, և ըստ այնմ հաճութեամբ կատարել: Վասնզի մեր ծնողք իրենց հրամաններն ու արգելքները միշտ երկնց զթոյ ու մեր իսկական օգտի թելադրութեամբ են տալիս:

Որովհետև մեզ համար բաւականութիւն պէտք է լինի մեր ծնողքին հնազանդիլը, մենք այդ բաւականութիւնը պէտք է արտայայտենք այն պատրաստականութեամբն ու ակոթմանքովն որով կատարում ենք մեզ պատուիրուածը:

Մի երեխայ որ դանդաղութեամբ է կատարում իրեն տրուած պատուէրները, որ մէկ կամ երկու անգամ զգալաւորապէս զգի իսկ . այսուչ ցտայի

անգամ կրկնել է տալիս, և որ իրեն հրամայուածը տհաճ դէմքով է կատարում, մի շատ անհաճոյ էակ է. մինչև անգամ կասկածել կարելի է թէ նա բարի սիրտ ունեցող լինի:

Հնազանդութիւնը լրիւ պէտք է լինի, այսինքն հնազանդել պէտք է ծնողքին ինչպէս կարեոր՝ նոյն և թեթեւ բաների մէջ:

Վասնզի, իսկպէս ասելով, թեթեւ անհնազանդութիւն ամենեւին չկայ: Անհնազանդութիւնն ըստ ինքեան այնպիսի մի մեծ չար բան է, որ երբ մտածուելով է եղած՝ միշտ յանցանք է նա, որքան էլ նուազ լինի նորան առիթ տուող բանը. նա ներելի է միայն՝ երբ մոռացութիւնից կամ անուշադրութիւնից է յուաջ եկած:

Բայց արդէն իսկ մի մեծ պակասութիւն է անուշադրութիւնն և մոռացկոտութիւնը, և պէտք է այնպէս անենք որ ազատ լինինք նոցանից:

Ինչու որ անհնազանդութիւնը կարող է երեխայի համար չարաչար հետեւանքներ ունենալ: Երեխան դատել կարող չէ. չգիտէ լաւն ու վատը, օգտակարն ու վնասակարն. անկարելի է նորան իւր զործքերից յուաջ գաղիքները նախագուշակել: Իւր ծնողքն, ընդ հակառակն, խոհեմութիւն ու բանա-

5266 / 1028-2013 38



կանութիւն ունին. գիտեն թէ ինչ նորան օգտակար կամ վնասակար է, թէ ներկայի թէ ապագայի համար: ճանաչում են նորա արածից յառաջագալիք բոլոր լաւ կամ վատ հետեւանքները: Ուրեմն նոցա է անկ սորան հանապազորդ կառավարել, և սորան նոցա պատուէրներին առանց բացառութեան և առանց պատճառ խնդրելու հպատակիլ: Նոքա պատաւոր չեն նորան պատճառը յայտնելու: Թող որ ինքն էլ կարելի է չհասկանար եթէ բացատրէին էլ:

Ամէն անգամ որ ծնողք իրենց երեխային հրամայում կամ արգելում են մի բան, այդ նորա բարու համար է: Նա պէտք է համոզուի որ ինչ նորան արգելուում է՝ միշտ վատ է, թէ և չհասկանայ էլ թէ ինչն է, և պէտք է երկիւղածութեամբ հեռու կենայ այն բանից:


Կան երեխաներ որոնք առանց յատկապէս անհնազանդ լինելու իրենց տրուած պատուէրներին՝ մի հնարք գտնում են նոցանեց ազատուելու: Մի պատուէրից կամ մի արգելքից փախուստ աւարտում են այդ է: Պահենք մեր անձը այդպիսի անարժան հնարազիտութիւններ բանեցնելուց: Սոքա կարող են երեխային վարժեցնել ծածկամտութեան ու կեղծաւորութեան, որոնք զարշնլի ախտեր են:

Հնազանդիւք միշտ պարզութեամբ, լրիւ, զբւարթութեամբ: Այդպէս մեր խիղճը միշտ հանգիստ կրլինի, և մենք խոյս կուտանք այն անհամար չարիքներից՝ որ անհնազանդութիւնը անհրաժեշտ իւր ետեւից բերում է:

... մի քանի անգամ ասում ենք, որ մեր հոգիս չի կարող լինել այնպէս, որ ինչ որ ասում ենք, դա իրականում չի լինում. և մենք մտաբերում ենք, որ մեր հոգիս չի կարող լինել այնպէս, որ ինչ որ ասում ենք, դա իրականում չի լինում. և մենք մտաբերում ենք, որ մեր հոգիս չի կարող լինել այնպէս, որ ինչ որ ասում ենք, դա իրականում չի լինում.



... ասում ենք, որ մեր հոգիս չի կարող լինել այնպէս, որ ինչ որ ասում ենք, դա իրականում չի լինում. և մենք մտաբերում ենք, որ մեր հոգիս չի կարող լինել այնպէս, որ ինչ որ ասում ենք, դա իրականում չի լինում. և մենք մտաբերում ենք, որ մեր հոգիս չի կարող լինել այնպէս, որ ինչ որ ասում ենք, դա իրականում չի լինում.



ԱՆՀՆԱԶԱՆԴ ՏՂԱՆ: արամ
 Եկին որդի էր մի այրի կնոջ՝ որ բնակում էր մի դարբնոցի մտակայքում. իւր կեցած տան լուսամուտները թէ և նայում էին գետի վրայ, բայց տունը սորանից բաւական հեռու էր:

Տանը մօտիկ՝ գետի առաջ բանդ էր կապուած որ ջրի մի մասը դարձուի դէպի արտերը, որոնց մէջ, հարկաւոր եղածին պէս, մերթ ընդարձակ ծաւալուում է ջուրը, առուակ առուակ մերթ գնում, կամ թէ տեղ տեղ սահանք դարձած վայր թափուում:

Մոյն այդ մի տեսակ ջրանցքի բերնումն իսկ, գետը՝ շինուած թումբերի մէջ սեղմուելով՝ դարձնում է դարբնոցի մեծ անիւր:

Անիւր, որ երեք մէտր լայնութիւն և եօթը մէտր արամագիծ ունէր, փեռերով էր, որոնց որ սրնթաց ջուրը խբելով ներքեւից անիւր պտոյտուում էր ու դէպի դարբնոցի ներսի կողմը երկնցած մի ահագին գերան էլ հետն էր շարժման մէջ դնում, որի որ պտոյտուելովն էլ վեր բարձրանում ու վայր էր ընկնում մի ահագին ուռն՝ որ երկուքից մինչև երեք հարիւր քիլոգրամ ծանրութեամբ

երկաթից էր շինուած, և բանուորները ծիծաղելով ուռնի կ էին անուանում:

Հասկանալի է թէ գետի ընթացքը այդ տեղինչքան սուր է, և թէ ինչքան անուին է մօտենում՝ այնքան աւելի բռնութիւն ստանում:

Արդարև ջուրն ահագին թափով անուի վրայ է ընկնում և թումբերին բախուում սաստիկ յորձանքով ու որոտումով, և հեռուն է ժայթքեցնում փրփրալից կոհակներ:

Այդ ջրանցքին մօտիկ էր Եմիլի մօր կեցած տունը:

Եմիլը մի մեծ պակասութիւն ունէր. հնազանդ չէր: Մօրը շատ սրտանց էր սիրում, և մօտն եղած ժամանակը՝ նորան ոչ մի տժգոհութեան տեղիք չէր տալիս. բայց բաւական ահ չունէր նորանից, և երբ աչքէն հեռանում էր նա՝ էլ հողը չէր թէ չլինի այնպիսի բան անէ որ յանդիմանութեան արժանանայ:

Ուստի դասատնում էլ չէր աշխատում. և արդէն տասն և մէկ տարեկան էր, բայց հազիւ թէ կարող էր միայն ժողովել ու միբանի տառ մօտեմօտ շարել:

Դասատան ժամերից վերջը գնում վազվզում էր դրսի պարսպ սարսպ տողոց հետ, որոնց հետ

մայրն արդեւէլ էր նորան ընկերութիւն ա-
նելու:

Բարի մայրը, որպէս զի այդ բանը խափանէ,
պարտաւորուած էր, թէ և դժուար էր իւր համար,
ամէն օր նորան մինչև ուսումնարանի դուռը տանելու,
և դասերն որ պըրծնում էին: դարձեալ գնում յետ
էր բերում:

Թէև շատ էր ուղղում, հինգշաբթի օրերը
նորան տանը պահելու, բայց էմիլը լացութեաց էր
լինում, և խոստանում էր խելացի շարժելու: Թէ որ
մայրն իրեն թողնէ դուրս գնալու: Աւստի հրաման
ստացաւ հինգշաբթիները գնալու մենակ խաղալու,
միայն թէ ջրանցքին չմտենայ, և մանաւանդ ձեռք
չտայ մի փոքրիկ նաւակի՝ որ կապուած էր շղթայով
ջրեղերքին:

Էմիլը խոստացաւ նորան այդ բանը, և ետեւէ
ետեւ երկու հինգշաբթի հնազանդ կացաւ, խաղաց
միայն խելացի ու բարեկիրթ աղոց հետ, և դետին
էլ չմտեցաւ:

Բայց երրորդ հինգշաբթին (այդ օրը մայրը մի
անհրաժեշտ գործի համար դուրս էր գնացել),
մտածեց որ կարող է երթալ դետի ամբարձրանու
մօրից բոլորովին գողտուէ:

Սակայն մայրը գործը վերջացնելուց յետոյ տուն է
դառնում, և հասնելուն պէս առաջին բանը լինում է
մէկ դետի կողմը նայելը, վասնզի ճանաչելով որդու
անհնազանդ բնաւորութիւնը՝ իւր սիրտը շարունակ
տանջուած էր կասկածանքով:

Մի փոքրիկ նաւակի մէջ մի երեխայ է տես-
նում, որ աշխատում էր մենակ դետն անցնել:

«Ո՞րոնք են արդեօք այդ երեխայի ծնորքը,
ասաց, որ թող են տալիս դորան այդպիսի վտանգա-
ւոր խաղ անելու:»

Բայց ինչ դարձաւ նա՝ ճանաչելով որ այն ե-
րեխան իւր որդի էմիլն է. էմիլը, որին նա այնքան
անգամ պատուիրել էր որ ջրին չմտենայ. էմիլն,
որ թի վարելն ինչ ասել է չգիտէր:

Այո՛, էմիլն էր՝ ողորմելին: Նա արձակել էր
նաւակն ափին կապող շղթան, ապա՝ չհասկանալով
վտանգն ու կարծելով թէ հեշտ կարող էր թիա-
վարել, տուել էր նաւակը ջրի ընթացքին. երգ էր
ասում բարձր ձայնով, բնաւ անգամ չտեսնելով այն
անդունդը որ իրեն կուլ էր տալու, չըսելով անիւնի
ու թմբերի դէմ խորտակուող ալիքների որոտն ու
գոչ:

Մայրն որ այդ տեսաւ թէ չէ՛ ճիշտ արձակեցու
գուրս թուաւ:

Այնպէս սոսկալի եղաւ այդ ճիշն որ, չնայելով
կուանի խլացնող ձայներին, դարբնոցի բանուորները
լսեցին, գուրս վազեցին գործասնից: Բայց ի՞նչ կու
գար ձեռքերից անհնազանդ տղին պրծըցնելու հա
մար. ջրի վազքը արագ արագ քշում էր նորան
դէպ անուի կողմն:

Իսկ ինքն երգում էր դեռ, երթալով ու այն
աղէտալի տեղին մօտենալով. մօր աղաղակն որ լը
սեց ու բանուորներին զարհուրած տեսաւ, որոնք
հազիւ այն խեղճին՝ որդուն հասնելու համար՝ ին
քըն իրեն ջուրը ձգելուց պահում էին, նոր հաս
կացաւ սպառնացող վտանգը. սարսափով տեսաւ
սոսկալի անիւր. բազուկները տարածեց, վերջին
համբոյրն ուղարկեց մօրը, ապա իրար անցուց ձեռ
ները, ծունկ չոգեցաւ և հոգին Աստուծուն յանձ
նեց:

Այսպէս կորաւ էմիլը, իւր անհնազանդու
թեանը զոհ եղած:

ՀԵԶՈՒԹԻՒՆ, ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆ, ՎԱՐՔ

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՈՒՄ:

Հնազանդութիւնը, որ մենք պարտաւոր ենք
մեր ծնողքին, մեր վրայ պարտք է դնում աշխա
տիլ և ուսանիլ եռանդով:

Ուսմունք առնելու ընդունակ լինելուս պէս՝
մեր ծնողք մեզ ուսումնարան են ուղարկում. դա
մեր բարու համար է. վասնզի այսօր մարդս առանց
ուսման բան յառաջ տանել կարող չէ. միայն ու
սումն է որ մեզ պիտի սովբեցնէ անթերի մեր
պարտականութիւնները կատարել և մեր գործերը
լաւ վարել. ձանձրութեան դէմ մի ապահով դեղ է
նա. հնարաւոր է անում նա մեզ մեր պարսպ ժա
մերը օգտակարութեամբ և գուարճութեամբ լի ա
նելու, և մեզ ընդ միշտ պահպանում է վատ սովո
րութիւններից որոնց մէջ մեզ կործանել կարող էին
տօնական օրերի պարապորդութիւնները: Ուսումն
այսօր մարդուն համարեա այնքան կարևոր է՝ որ
քան կերակուրը, որ նորան սնունդ է տալիս, և օդը՝
որ նա շնչում է:

Ահա սոյն բարիքը վայելելու աղաղաւ՝ ծնողք
մեզ ուսումնարան են ուղարկում:

Սրտով պիտի երթանք և հաճութեամբ վարն զի երեխան, որ տակաւին ուսման առաւելութիւններն ըմբռնելու համար դեռահաս է, զիտէ որ իւր ծնողքի կամքը պէտք է կատարէ: Այսքանն հերիք է ուսումնարանը նորան սիրելի անելու համար:

Ինչ պէտք է լինի այն երեխայի անելիքը՝ որն որ ուսումնարանում այնպէս ընթանալ է ցանկանում որ ծնողքի գիտաւորութիւնները կատարէ: Ահա ապիկ ինչ

Երեխան կարծիկ ճանապարհովը պէտք է գնայ ուսումնարան, առանց յաջ և յահեակ խտորուելու, առանց գնալիս խաղալու: Նշանակուած ժամից վերջը առջ պէտք է հասնի. իւր անձն ու զգեստները կատարեալ մաքուր պէտք է լինին:

Համեստ և հանդարտ կերպով դասատուն է մտնում, առանց վագելու, առանց շտապելու. գրնում է իւր տեղը՝ առանց ընկերներից մէկին խանդարմունք ապու:

Բոլոր դասատուութեան տեղութեան ժամանակ նա միայն իւր ուսմունքին է գրադուած, և ուրիշ բանի վրայ չի մտածում:

Ուշադրութեամբ լսում է վարժապետի ասածը, և ջանք է անում օգտուել:

Չանադրութեամբ կատարում է իրեն յանձնուած պարտքը, և ակորժով ու եռանդով սովորում է դասերը:

Չի ծիծաղում, չի խօսում մօտը նստողների հետ, աններելի է համարում որ և է խաղ և որ և է կատակ:

Վարժապետի իւր վրայ չնայած ժամանակն էլ այնպէս հանդարտ է ինչպէս և նայած:

Դասատուութիւնը աւարտուելուց յետոյ տուն է դառնում ծնողքի մօտ, առանց իրեն գնալու պատուիրուած ճանապարհէն շեղուելու:

Լաւ աշակերտը ամօթխած է լինում, այլ և ունի մի շափաւոր վատահութիւն. թէ մի բան չի հասկանում, խօսելու թողտուութիւն է խնդրում. և երբ թողտուութիւնը շնորհուած է իրեն, խնդրում է վարժապետից որ բացատրէ իրեն ինչ որ դժուարացաւ ըմբռնել:

Ոչ սնապարծ է ոչ գօռող. որովհետեւ գիտէ որ սնապարծութիւնն ու գօռողութիւնը ատելի ակտեր են:

Իրնից տկար աշակերտների վրայ ծիծաղում չէ. միտքը չի դնում թէ նոցանից ինքը վեր է. իւր յաջողակութիւնների վրայ երբեք չի խօսում:

Լաւութեան նախանձաւոր է, և վտփազում է

ուրիշները չափ լաւ և մինչև անգամ նոցանից էլ լաւ անելու. բայց նախանձոտ չէ. երբ տեսնում է թէ ընկերներն իրեն գերազանցեցին՝ նախանձութեամբ չի լցուում, այլ կրկնապատկում է ջանքն ու սիրտ անում որ հասնի նոցա հաւասարուի, կամ մինչև իսկ նոցանից անցնի:

Բարեմիտ է իւր բոլոր ընկերների համար, և բնաւ առիթը չի փախցնում չափաւոր ու ներելի բաների մէջ նոցա զբօսեցնելու:

Պասատնից դուրս՝ ուսումնարանում գործըւած յանցանքների, կրած յանդիմանութիւնների և առած պատիժների վրայ չի խօսում:

Պասատնում չի խօսի ինչ որ ուսումնարանից դուրս արել են. բամբասում չէ ամենեւին և քսութիւն անում չէ:

Զգոյշ է կռուելուց, զգոյշ է նաև ոյժ գործ դնելուց, բայց եթէ միայն երբ պաշտպանել պէտք լինի տկարին ուժեղի բռնութիւնից:

Պատահած ժամանակ՝ ամենի հետ բարեկամաբար խօսում է, բայց մտերմական կապ միայն աւելի խելացիների հետ է կապում. շատ խնամքով խոյս է տալիս անառակների և նոյն իսկ անխոհեմների ընկերութիւնից. վասն զի անխոհեմութիւնը և

անմտածողութիւնը կարող են դէպի անհնազանդութիւն տանել և բոլոր այն ախտերի մէջ ձգել՝ որոնց որ մայրը անհնազանդութիւնն է:

Բարի օրինակ է ամենին, մանաւանդ իւր բարեկամներին. չի խօսում, չի անում նոցա հետ ոչինչ որ պատմուելու բան չլինի թէ իւր և թէ նոցա ծնողքին:

Յարգում ու սիրում է իւր վարժապետին. հեզ սրտով ընդունում է նորա պատուէրներն ու խորհուրդներ, երախտագէտ է նորա խնամքի համար:

Երբէք չի տրտնջում նորա խստութեան դէմ. երբէք կասկածի տակ չի ձգում նորա անաչառութիւնն ու արդարութիւնը. և երբ լսում է թէ վատ են խօսում նորա վրայ, որդիական նախանձաւորութեամբ և բարեկամական ջերմութեամբ պաշտպանում է նորան:

Այս վարք ու բարքն ունենալով, աշակերտը պտուղ կը քաղէ իւր վարժապետի դասերից, և իւր ծնողքի խնդրութիւնն ու փառքը կը լինի:

ՎԱԼԵՆՏԻՆ:

Սիրով է կարգացուում մի մանուկ հոգուի պատմութիւն, որն որ ուսման յարատե սիրովը շատ գիտնական մարդ դարձաւ:

Անունը վալենտին ժէմերէյ— Կիւվալ էր. Եամիրանիայում մի Արտօնեցի աղքատ գործարարի որդի էր, և տասներկու տարեկան հասակումն էր որ դժբաղդաբար զրկուել էր հօրից: Մայրն ուղարկեց նորան ուսումնարան, թէ և յետին չքաւորութեան մէջ էր, և այդ իսկ ժամանակից նա սիրահարուեցաւ ուսման: Բայց այն ժամանակները ուսումնարանը դիւղում միայն երեք ամիս էր բաց լինում: Վալենտին երեք ամիսը մօր մօտ էր անցկացնում և շարունակ անպակաս էր դասից. տարուայ միւս մասը միերկրագործի մօտ էր անցկացնում, որի անասուններն արածեցնելու էր տանում:

Վալենտինը ջանասէր և միանգամայն խելացի աշակերտ էր, ու տարուայ գեղեցիկ եղանակներին որքան իրեն հնարաւոր էր՝ գրքերի հետ էր, որպէս զի ձմեռուայ ուսածը չմոռանայ: Տասն և չորս տարեկան հասակում կատարեալ կարգում, չափաւոր գրում, նա և հաշուում էր. նոյնպէս շատ լաւ գի-

տէր քրիստոնէականը և առաջին հաղորդը առել էր: Այդ միջոցին հարկադրուեցաւ իրենց գիւղից հեռանալու, ուր աղքատութիւնը սաստիկ տիրապետում էր և իրեն անհնարին էր իւր հացը վաստակելը: Ետո լաց եղաւ մօրից ջոկնաւ լին, և հաստատ միտքը դրեց իւր վաստակածի մեծ մասը նորան ուղարկել, այն օրից որ իրեն յաջողուի տեղադրունելը: Այս մտադրութիւնը նա յետոյ ամենայն վտուրով և ամենայն ճշդութեամբ կատարեց: Դանապարհ ընկաւ դէպի Ղօրէն:

Հազար եօթն հարիւր ինն թուականն էր: Այդ տարին ցուրտը խիստ սաստիկ եղաւ: Մանուկ ուղևորը, միքանի օր գնալուց ետքը, էլ չկարողացաւ բիրտեղանակին դիմանալ, և, դժբախտութիւնը միւս ծայրն հասնելով, ծաղկից բռնուեցաւ: Քաշած տանջանքները անտանելի էին, և ձիւների մէջ մոլորուած էր մի այնպիսի երկրում, ուր յետին սնանկութիւնը զթութեան բոլոր դռները փակել էր: Քիչ էր մընում յուսահատ մեռած ընկնի ձնի մէջ. բայց միտքը ընկաւ իւր մայրը, որի միակ յոյսն էր ինքը, կանչեց Աստուծոյ ողորմութիւնը և հօգին իրեն դարձաւ:

Գրած էր իր մայրը, որ իր մահը յոյսն էր ինքը, կանչեց Աստուծոյ ողորմութիւնը և հօգին իրեն դարձաւ:

Քաշ գնալով վերջապէս հասաւ մի կալուածք: կալուածատէրը՝ զթահար՝ ձեռքից բռնած, կամ մանաւանդ թէ շալկած, ոչխարգոմբ տարաւ նորան: Հանեց նորա վրայից զգետոր, պատատեց հին ցընցոտիներով և հաճարի մանր յարդով, ու թաղեց նորան մինչև թևերը ոչխրի խուշիւ մէջ, որ ինչ է տաքանայ և հիւանդութիւնը շուտով դուրս տայ. ապա խաչի նշանն արաւ վրէն ու քաշուեցաւ ասելով. «Աստուած զթայ քու վրէդ, խեղճուկ տղայ. վասնզի նա միայն կարող է գալ քեզ օգնութեան»:

Արդարև, վալենտին յոյսը դրեց Աստուծո վրայ, և Աստուած նորան երեսի վրայ չթողեց: Աղբի ջերմութիւնը, ոչխրի շունչը՝ կամաց կամաց նպաստեցին նորա առողջութեան յետ գալուն: Օրն երկու անգամ զթասերտ կալուածատէրը, չնայելով իւր սնանկութեանը, գարեալիւրով խաշիլ էր բերում, փոքր ինչ աղով համեմուած: Իւր աղքատութիւնը իրեն միայն այսքանը ներում էր նորան տալու:

Բայց ձմեռը աւելի խստանում էր: Ոչխարգոմբը շուրջ պատուած էր ընկուզենիներով: Յաճախ, գիշերով, երեսան յանկարծական ձայներից, որոնք նման էին որոտմունքի կամ հրազենքի ճայթմունք»

ների, վեր էր թռչում քնից: Ծառերն էին դռքա, որոնցից ոմանք ցրտի սաստկութիւնից ճարձատմունքով պատառուում էին մինչև արմատները:

Երբ վալենտին սկսաւ լաւի դառնալ, կալուածատէրը նորան մի քանի հացի կտորտանք բերաւ, որ սառուցն անպէս կարծրացուցել էր՝ որ ստիպւած էին կացնով կտորելու:

Ծուխի քահանան բարի կալուածատիրոջն օգնեց մանուկ հիւլնդքաղին ձեռք տալու, և վալենտին առողջութիւնն ու ուժը գտնելուց ետքը՝ իւր համար տեղ ճարեց. անդէորդ մտաւ մի հողագործի մօտ, շարունակեց ըստ կարելոյն յաճախ կարգալ, որպէս զի ուսածը չմոռանայ:

Աստուածային նախասնամութիւնը ապա տարաւ նորան, անտառի խորը, կունկվիկից փոքր հեռու, մի առանձնացած տուն, ուր բնակուում էին չորս բարեպաշտ մարդիկ, որոնք բնաւին աշխարհից քաշուած՝ ապրում էին այնտեղ իրենց յատուկ ձեռքով մշակած փոքրիկ հողի բերքովը: Նոցա մի Լբելայ պէտք էր՝ որ կովերն արածեցնէր: վալենտին ներկայացաւ նոցա, և նոքա բարութեամբ ընդունեցին նորան և խոստացան նորա ստանալը վարձքի շատ մասը նորա մօրը բաժին դրելը:

Եւ այնուհետեւ, անհոգ իւր վիճակի մասին, և ուրախ մօրն օգտակար լինել կարողանալուն համար, երկու բանի վրայ միայն մտածեց վալենտին. մէկ իւր տէրերին ունեցած պարտքը լաւ կատարել, մէկ էլ իւր ազատ ժամերը ուսանելու գործ դնել: Որպէս զի լաւագոյն սովորի գրել՝ իւր լուսամուտքի ապակիներից մէկը պրծուց հանեց, և օրինակի վրայ զննելով՝ նորա երեսին քաշում էր թափանցիկ Երեւցող գծերը: Տանն էլ մի համառօտ թուաբանութիւն գտաւ, ու առանց վարժապետի ուսաւ չորս դասերը, այս իրեն համար խաղի ու գուարձութեան աղբիւր դարձաւ:

Մի քանի լաւ գիրք ունէին իւր տէրերը. տեսնելով նորա ուսանելու յօժարութիւնը, նորան տուին: Աւստի անտառում էլ ոչ մի քայլ չէր փոխում իւր կովերի ետեւից առանց գրքի: Այն եկեղեցու քահանան, ուր նա կիւրակէ օրերը գնում էր պատարագին, նորան մի աշխարհագրութեան ձեռնարկ փոխ տուեց. նա այնքան փափագով ուսաւ այդ գիրքը որ շուտով նորան ծանօթ եղան երկրագնաի բոլոր կողմերը, ինչպէս ծանօթ էին անտառի այլևայլ անկիւնները: Իրեն տրուած ընծաների գրնով մի փոքր աշխարհացոյց տախտակ էր դնել, որի

մէջ կար մի հարթագունդ՝ ուր երկնքի զանազան աստղերը իրենց անունով ու մեծութեամբ նշանակուած էին: Դոյն տախտակի ձեռքով վալենտին ուզեց բոլոր աստղատունները ճանաչել սովորել: Պարզ գիշերներով՝ մի ժայռի գլխի նստած զիտում էր աստղերը: Յաջողութեամբ խրախուսուած սւսման սէրը՝ օր աւուր աճում էր:

Մի օր որ մի ծառի տակ նստած, շուրջը ժողոված գրքեր ու աշխարհացոյց տախտակներ, խորասուզուած էր ուսման խորը, չնշմարեց թէ ինչպէս երկու օտարականներ իրեն էին մօտեցել ու զարմանքով զիտում էին: Երկուսից մէկը պատանի էր, միւսը հասուն հասակի մարդ. լօրէնի պայազատ իշխանն, որ ապա Գերմանիայի կայսր եղաւ Փռանկիսկոս ա. անունով, ու իւր դաստիարակն էին: Ապշած՝ որ մի մանուկ անդէորդի այն կերպ զբաղուած էին տեսնում, չէինքն ասնում, ո՛րդեակ, այդպէս, ասացին: — Ուսանում եմ ամաչկոտ պատասխանեց վալենտին:

Միթէ դու այդ գրքերից բան հասկանում ես: — Զանք եմ անում, պատասխանեց մանուկ անդէորդը, որ արդէն պատկառանքով ոտի էր կանգնած:

Այն ժամանակ պատանի իշխանը և իւր դաս-

տիարակը շատ հարցմունքներ արին նորան աշխարհ
 հազրութեան, պատմութեան, թուարանութեան
 մասերից, և հիացած մնացին նորա տուած պատաս-
 խանների վրայ: Տեղեկութիւններ առան նորա մա-
 սին՝ իւր տերերից, որոնք ասացին թէ որքան ուսում
 նասէր՝ այնքան և պարկեշտ ու խելացի է նա:

Այս պաշտօնը յետ դարձան, իշխանը պատմեց
 հօրը թէ անտառի մէջ մի մանուկ անդէտորդ է գը-
 տել, որ իւր ջանքովն և եթ վարմանալի ուսմունք է
 առել: Եւ խնդրում է հօրից թողտուութիւն որ այն
 պատանու բաղդն իրեն յանձնուի, և ստանում է:

Վալնտին, իւր բարերարի ձեռքով փոխամու-
 սօնի դպրոցը տրուելով, արագ յառաջադիմեց ա-
 մէն տեսակ ուսմունքի մէջ. երևելի եղաւ գիտու-
 թեամբ: Իշխանը, այնուհետև կայսր լինելով, նորան
 իրեն զբաղարանապետ կարգեց:

Ժամերէյ—Յիւվալը, հօր ու հարուստ էլ լի-
 նելով, միշտ պարզ, համեստ և կանոնաւոր վարք
 պահպանեց բոլորովն այնպէս, ինչպէս անտառների
 մէջ կովապահ եղած ժամանակը: Ուսման ու բա-
 րեգործութեան գուարձութիւններէն դուրս ուրիշ
 զուարճութիւն չգիտցաւ երբէք:

Իւր ծնողքի տունը նորոգ շինել տուեց, իւր

մօրը մի դիւր կենցաղ ապահովեց, և երբ սա կեան-
 քը կնքեց, հասարակութեան ընծայեց տունը, որ
 այնտեղ հաստատուի ուսումնարանը, և ուսուցիչը
 այնտեղ բնակուի:

Այս պատմութեան վերջում արեւմտեան ժողովուրդը
 շատ քիչ էր հետաքրքրուած իշխանի պատմութեամբ:

Սակայն իշխանի պատմութեան մասին քիչ քիչ
 հետաքրքրուած էր ժողովուրդը, որովհետեւ իշխանը
 իր անձնական կյանքով ցուցաբերեց, որ ինչպէս
 կարելի էր իր անձնական կյանքով ցուցաբերել
 իր անձնական կյանքով:

Սակայն իշխանի պատմութեան մասին քիչ քիչ
 հետաքրքրուած էր ժողովուրդը, որովհետեւ իշխանը
 իր անձնական կյանքով ցուցաբերեց, որ ինչպէս
 կարելի էր իր անձնական կյանքով ցուցաբերել
 իր անձնական կյանքով:

Սակայն իշխանի պատմութեան մասին քիչ քիչ
 հետաքրքրուած էր ժողովուրդը, որովհետեւ իշխանը
 իր անձնական կյանքով ցուցաբերեց, որ ինչպէս
 կարելի էր իր անձնական կյանքով ցուցաբերել
 իր անձնական կյանքով:

Սակայն իշխանի պատմութեան մասին քիչ քիչ
 հետաքրքրուած էր ժողովուրդը, որովհետեւ իշխանը
 իր անձնական կյանքով ցուցաբերեց, որ ինչպէս
 կարելի էր իր անձնական կյանքով ցուցաբերել
 իր անձնական կյանքով:

Սակայն իշխանի պատմութեան մասին քիչ քիչ
 հետաքրքրուած էր ժողովուրդը, որովհետեւ իշխանը
 իր անձնական կյանքով ցուցաբերեց, որ ինչպէս
 կարելի էր իր անձնական կյանքով ցուցաբերել
 իր անձնական կյանքով:

Սակայն իշխանի պատմութեան մասին քիչ քիչ
 հետաքրքրուած էր ժողովուրդը, որովհետեւ իշխանը
 իր անձնական կյանքով ցուցաբերեց, որ ինչպէս
 կարելի էր իր անձնական կյանքով ցուցաբերել
 իր անձնական կյանքով:

ԾՆՈՂՔԻ ՎՐԱՅ ՌԻՆԵՆԱԼԻՔ ՀԱՒԱՏՐԷ:
 Բայց միայն անթերի հնազանդութիւն պարտա-
 կան ենք մեր ծնողքին, այլ և լիովին հաւատ պէտք
 է ունենանք նոցա վրայ:

Աստուած, որ նոցա է յանձնել մեր վրայ հըս-
 կելու խնամքը, տուել է նոցա նաև մեզ առաջնոր-
 դելու հարկաւոր լոյսը: Քանի դեռ մատաղ ենք, ան-
 կարող ենք մենք մեզ կառավարելու. նոցա է անկ
 մեզ ուղեցոյց լինել:

Միայն մեր հայրն ու մայրն են որ այնքան սի-
 բուժ են մեզ՝ որ ամէն ժամանակ պատշաճ ազդարա-
 րութիւնները մեզ անելու պատրաստ են:

Ծնողքի վրայ հաւատ չունենալը այն մեծա-
 մեծ դժբաղդութիւններից մէկն է, որոնց որ մի երե-
 խայ հանդիպել կարող է:

Այդ հաւատի պակասութիւնը նորան ստախօս
 անել կարող է, իսկ ստախօսութիւնը մի ատելի ախտ
 է որ նորան ուրիշ ախտերի մէջ կըձգէ: Սուտ խօ-
 սելը ինչ մարդու կուզէ լինի, միշտ մի մեծ չարիք
 է. բայց սուտ խօսելիւր հօրն ու մօրը, դա մի սըր-
 բապղծութեան պէս բան է:

Ծածկամիտ լինել նոցա հետ և ճշմարտութիւնը

նոցանից թագուն պահել, աշխատելով հանդերձ
 որ սուտ չխօսինք, դարձեալ այնպէս մի աղետալի բան
 է որքան և դատապարտելի. վասնզի մեր ծնողք անթիւ
 բաներ գիտեն որ մենք չգիտենք. նոքա տեսնում են
 մեզ սպառնացող վտանգները, և նոքա միայն կարող
 են մեզ խրատել նոցանից դերձ մնալու:

Ուրեմն բան պէտք չէ ծածկենք մեր ծնողքէն:

Դա է մեր անմեղութիւնը պահպանելու ու բա-
 րի վարքի մէջ յարատև մնալու միակ միջոցը:

Եթէ մէկը խրատ տայ մի երեխայի՝ ծնողքէն
 գաղտուկ մի բան անելու, երեխան սոսկալով պէտք
 է մերժէ այդ խրատը:

Եթէ մէկը մի երեխայի բաներ ասէ՝ յանձնե-
 լով միանգամայն որ չերթայ ու հօրն ու մօրը չը-
 պատմէ, երեխան այդպիսուն իւր անձին կորստաբեր
 թշնամի պէտք է համարէ. որովհետև ինչո՞ւ չա-
 սել ծնողքին մի բան, եթէ այն մեղանչական կամ
 ֆրասակար չէ:

Հո՛ւսկ, հերիք չէ մեր գործողութիւնների ու
 մտածմունքների մասին մեր ծնողքին անկեղծ հաշիւ
 տալերս. նոցա սուտած հրահանգները պատկառոտ
 հեղութեամբ պէտք է լսենք, բարի օրինակներիցը օգ-
 տուինք, և բոլոր կեանքերումս մեր վարքը յարմա-

րեցնենք նոցա տուած դասերի համեմատ որ մեզ
տուին մեր մանկութեան տարիներում:

Ասնզի մեր առ նոցա փտահոթեան ու
յարգանքի անսխալ նշանը մեր նոցանից ստացած
հրահանգների համեմատ ընթանալն է, ասել է
այնպէս վարուել ամէն բանի մէջ որ Աստուծոյ
հաճելի լինենք ու պատուաւ որ մարդոց դո՛վութեան
արժանանք: Իրենց երեխայի բարի ընթացքը տես-
նող հայրն ու մայրը իրենք իրենց մի երկնային դը-
րախտի մէջ կը կարծեն, նորան տրուած զովասանք-
ներն զմայլեցնում են նոցա ըսելիքը, նորա առաքի-
նութիւնները նոցա սրտի խնդութիւնն են:

Սեր ձեռքն է նոցա այդ կերպ երջանկացնելը:
Ուրեմն հաստատութեամբ ու քաջալերութեամբ
գնանք բարութեան շաւղի հետ, յաղթենք մեր ե-
րեխայութեան փոփոխամտութեանը և պատանու-
թեան կրքերին, և պարտքի սուրբ օրհնքին հաւա-
տարիմ մնանք:

Սակայն մարդ որքան էլ որ բարի մտադրու-
թիւններով ոգևորուած լինի, դարձեալ պժուարին
է ամէն սխալանքէ զերծ մնալը՝ պատանի հասա-
կո՛ւմ:

Ուստի ի՞նչ պիտի անէ մի երեխայ որ պըժ-

բարդաբար ընկած է որ և է յանցանքի մէջ:

Չղջալ և յանցանքը ջնջել: Գործուած յանցանքի վրայ զղջալը, նոյնը գոր-
ծած լինելու համար խիստ ցաւ զգալն է: Յարձաս
Յանցանքը ջնջելը, նորա մասին զգացուած
զեղջը յայտնել՝ ներուզն ստանալ և որքան կարելի
է՝ հետքերը կորցնելն է:

Չիղջը շոյտ պէտք է լինի մի բույս անգամ
դէմ դնել պէտք չէ խղճի ձայնին:

Չիղջը անկեղծ պէտք է լինի ոչ թէ պէտք է
թոյլ և ունայն ապաշաւ լինի, այլ հոգին պէտք է
խոր ցաւ զգայ:

Չիղջը պէտք է տեւական լինի. եթէ շուտ ան-
ցընի երթայ, կարելի կը լինի մարդուս կրկին նոյն
յանցանքի մէջ սահիլ հեշտութեամբ, կամ թէ նո-
րը գործել:

Երբ զեղջը շոյտ, անկեղծ ու տեւական է, ուղ-
ղութիւնը շուտ վրայ կը հասնի:

Թո՛ղ գոռոզութիւնը արգելք չլինի ուղղուելուն:
Հոգու աղտոտութիւն է մարդուս իւր յանցանքը պար-
զութեամբ ճանաչելը և խոնարհութեամբ նոյնը
քաւելը. իսկ նորա մէջ յարատեւելը ամօթ է միշտ,
յաճախ յիմարութիւն է, և երբեմն իսկ ոճիր:

Բաւական է յանցանքը ջնջելը: զգուշանալ
պէտք է միւսանգամ չգործելու: մալ մ յաջրի՞

Երանի՛ այն երեխային՝ որին սակաւ է պա-
տահում յանցաւոր գտնուիլ: և որն որ շուտ քա-
ւում է արածները. աւելի երանի՛ նորան, որն որ
իւր առաջին տարիների կատարեալ անմեղութեամբը
իւր համար սխալանքներէ և մրրիկներէ ազատ պա-
տանութիւն է պատրաստում: մալ աթ Եջրի՞

միմիան միմի մ զամբ յմի յմի
մ զամբ միմի մ զամբ ծրմիմա Եջրի՞

մ զամբ միմի մ զամբ միմի մ զամբ մ զամբ
միմի մ զամբ միմի մ զամբ միմի մ զամբ

մա առջ միմի միմի միմի մ զամբ Եջրի՞

միմի միմի մ զամբ միմի մ զամբ միմի միմի
միմի միմի մ զամբ միմի մ զամբ միմի միմի

միմի միմի մ զամբ միմի մ զամբ միմի միմի
միմի միմի մ զամբ միմի մ զամբ միմի միմի

միմի միմի մ զամբ միմի մ զամբ միմի միմի
միմի միմի մ զամբ միմի մ զամբ միմի միմի

միմի միմի մ զամբ միմի մ զամբ միմի միմի
միմի միմի մ զամբ միմի մ զամբ միմի միմի

միմի միմի մ զամբ միմի մ զամբ միմի միմի
միմի միմի մ զամբ միմի մ զամբ միմի միմի

ԱՆԵՔՍԻՍ: Երանի՛ այն երեխային՝ որին սակաւ է պա-
տահում յանցաւոր գտնուիլ: և որն որ շուտ քա-
ւում է արածները. աւելի երանի՛ նորան, որն որ
իւր առաջին տարիների կատարեալ անմեղութեամբը
իւր համար սխալանքներէ և մրրիկներէ ազատ պա-
տանութիւն է պատրաստում: մալ աթ Եջրի՞

Մանուկ Ալեքսիսը վաղ զրկուեցաւ իւր մօրից:
Հօրը մի հատիկ զաւակ մնացած լինելով, ինքն էր
նորա մխիթարութիւնն ու երջանկութիւնը:

Մախանձելի հակամտութիւն ունենալով դէ-
պի առաքինութիւն ու աշխատութեան սէրը, ամէն
բան իրեն յաջողուում էր՝ ինչ որ ուսուցանում էին:
Շատ սիրում էր պարագայ ժամերին ուրուագծու-
թեան զբաղել. լաւ յաջողութիւն ստացաւ դոյն
արհեստի մէջ: Մի մեծ հայելու առաջ կանգնելով
կարողացաւ ինքն իւր պատկերն հանել, որ իրեն շատ
նման եղաւ: Հօրը տօնին՝ նորան բնծայ արաւ այն:
Հայրն սքանչացած այդ պարզէի վրայ՝ կախեց իւր
սննեակի մէջ: Քուն մանելէն առաջ հաճութեամբ
դիտում էր իւր Ալեքսիսի պատկերը, և առաւօտուն
զարթնելիս իւր հայեացքը նախ նորա վրայ էր
ձգում: մալ աթ Եջրի՞

Տարաբաղդաբար Ալեքսիսն որ տասն և եօթն
տարեկան եղաւ՝ վարքը փոխել սկսաւ: Իւր հօրեղ-
բօրորդիներից մէկը, որ չորս տարի նորա վրայ մեծ
էր ու ինքը իւր գլխին տէր էր արդէն, աշխատեց
չար խրատներով ու վտանգաւոր օրինակներով նո-

րան զլիւ է հանել: Համոզեց նորան թէ հայրը շատ
 խիստ է և յորդորեց նորա վերահայեցութիւնից
 ազատուիլ՝ որ կարող լինին գողտուկ արգելուած
 զուարճութիւններէ անձնատուր լինել:

Ալեքսիս նախ անդրդուելի կեցաւ, բայց սակայն
 մի օր, որ կարծեց թէ իւր յանցանքը անյայտ կը
 մնայ, թուլացաւ ու մի պատուիրանազանցութիւն
 դործեց՝ որ իրեն թիթե էր երևում. այլ անհնա-
 զանդութիւնը, ինչ առթով էլ որ լինի, այնու-
 ամենայնիւ ծանր բան է:

Եւ իրօք իսկ, Ալեքսիսը արգելուած զուար-
 ճութեանը անձնատուր եղաւ թէ չէ, ու նորա ա-
 դէտաբեր համը տեսաւ թէ չէ՝ մօտ հասաւ իւր
 կորստեան դռանը: Տակաւ առ տակաւ իւր բարի
 հակամտութիւնները վատթարացան, միաքրթանձ-
 բացաւ, և բաց յայտնի զանցարաւ իւր պարտքերը
 որ էլ կարծես չէր հասկանում:

Հայրը, որին այդ փոփոխութիւնը ցաւով ընկ-
 ճում էր, ամէն հնարք բանեցուց որ իւր անբաղդացած
 աղային անդունդն ընկնելէն պրծայնէ: Երբեմն զթոյ
 ներողամտութեամբ վարուեցաւ, երբեմն իմաստուն
 խստութեամբ: Բայց ոչ խստութիւնն և ոչ ներողութիւն
 չկարացին այն մոլորուած հոգուն բարի դարձի բերել:

Սակայն և այնպէս երբեմն Ալեքսիս ամաչում էր
 իւր գործած յանցանքի վերայ և առաջադրում էր
 այլ ևս չանել: Հօրը զիրկն ընկնելով դառն լաց էր
 լինում և խոստանում էր վարքն ուղղել: Բայց զըզ-
 ջման մէջ յարատեւելու համար՝ հարկաւոր է կամքի
 ոյժ, և Ալեքսիս այդ չունէր այլ: Տեղեք կուտար
 իսկոյն իւր նենդաւոր բարեկամի հրապուրանքներին
 ու իւր առաջին մոլորութիւնների մէջ էր ընկնում՝
 մոռանալով խոստումները:

Վերջապէս արդարապէս պայրացած և յիրաւի
 անհանգիստ եղած հայրը որոշեց չարը իւր արմա-
 տից կտրել: Իմանալով որ իւր եղբորորդին է Ալեք-
 սիսին անհնազանդութեան յորդորողը, չարաչար
 յանդիմանեց անպիտանացած երեսասարդին, վճռեց
 նորան իւր աչքից՝ արգելելով որ այլ ևս իւր տան
 չեմքը ոտ չկոխէ, և արգելեց Ալեքսիսին, ամենախիստ
 պատիժների սպառնալիքով, որ այնուհետեւ էլ ոչ
 մի յարաբերութիւն նորա հետ չունենայ:

Չարամիտ երեսասարդը բարկութեամբ մոլեգ-
 նոտած երկուեց զբէժը հանել: Քիչերը ծածուկ
 եկաւ Ալեքսիսի մօտ, որն որ հօր հրամանի հակա-
 ռակ վատաբար այնքան թողլ գտնուեցաւ որ լը-
 սեց նորան, և նա հաւանեցուց նորան՝ հօր խստու-

Թիւնից զաղտուկ փախուստ տալու: Ալեքսիս նախ զայրացած մերժեց այդ առաջարկութիւնը. բայց հօրեղբօրորդու խօսքերը ցրուեցին իւր խղճահարու-
 Թիւնը և խառնակեցին դատմունքը. մոլորուած, խելակորոյս, յաղթուեցաւ. և Աստուծոյ ու հօր առաջ ունեցած պարտաւորութիւնները մոռացած՝ տու-
 նը Թողեց ու գնաց: Հօրեղբօրորդին նախուստ ամէն զգուշութիւն արել էր, սյնպէս որ նոցա հետքը չգտան: Գնացին հասան մի հեռաւոր քաղաք, և այնտեղ ամէն տեսակ անկարգութեան տուին իրենց անձը:

Ահա Ալեքսիսը, այն մի ժամանակուայ լաւ ու խելացի Ալեքսիսը, ինչ արաւ. տեսէք մինչև ուր է հասնում մի երեսայ՝ որ մի անգամ ծուռ է փոխում իւր քայլը:

Մտակորոյս պատանին երկար չվայելեց իւր ուձիրի պտուղը: Երբ առաջին հեշտութիւնը ցնդաւ հորաւ, միտքն ընկաւ հայրը, և խղճի խայթը ըսկաւ նորան խոցոտել: Իւր տանջանքը երթալով երթալով դառնանում էր: Այլ ոչ զուարճութիւն, այլ ոչ հանգիստ: Խնջոյքների ու հանդէսների մէջ, ուր նորան քաշ էին տալիս ու տանում, գոյնը թափուած էր ու միտքն այլեկոծ, և անմխիթար

Թողուած հօր յիշատակը չարաչար խայթոցներ էր տալիս նորա սրտին: Մերթ պատկերանում էր նա իւր աչքին հառաչելով ու արտօսը թափելով, մերթ զայրացմամբ բորբոքուած կարծես անիծում էր մեղաւոր որդուն: Այս աղետալեց պատկերները անդադար վեր էին երևում մինչև անդամ իւր երազների մէջ, և աղմկում էին կարճ և ընդհատ քունը:

Այլօրինակ կեանքը նորան անտանելի դարձաւ: Վճռեց իւր յանցանքը քաւելու և հօր առջև կրկին շնորհ գտնելու համար ամէն ձեռքէն եկածն անել: Ոչ կեղծ ամօթը և ոչ պատժի ահը նորան յետ կանգնեցնել էլ չկարողացան: Խղճի խայթը մաքրել էր նորա յանցաւոր սիրտը, և հեռացնելով նորանից թուլութիւնն ու միանգամայն խաբուունքները, յետ էր դարձուցել մտքի պայծառ տեսութիւնը ու կամքի ոյժը:

Անդարձաբար բաժանուեցաւ կեղծ բարեկամից՝ որ մոլորեցուցել էր իւր պատանեկութիւնը, և ուզեորուեցաւ զէպի իւր ծննդեան տեղը:

Իւր հօր տունը, որ զիւղեց մի փոքր առաջով էր ընկած, առանձին էր գտնուում և ջրջապատուած էր ճոխ պարտէզներով: Երբ Ալեքսիս հասաւ

այն բլրի վրայ՝ որտեղից երևում էր հայրենի բնա-
կարանը, կանգ առաւ, սիրտն ելած էր: Հառաչանքներն
արձակուեցան, արտասուները կոխեց աչքերը. «Այն
տեղ, ո՛հ, այնտեղ, աղաղակեց բեկբեկ ձայնով, անցու-
ցած եմ մանկու թիւնս նորա մօտ, որին հայրս կոչելու այլ
չեմ արժանի: Ա՛խ, ի՛նչ երջանիկ էի երբ միակ խո-
ճրս նորան զոհանէիս քեզ նորան հաճոյանալս էր, երբ
սիրում էի ուսումն ու աշխատանք, երբ անմեղ էին
զուարճութիւններս ու մաքուր: Ակերտին կրճնանի
այդ բաղդատր ժամանակը: Ահաւասիկ ես, հայր իմ,
յետ եմ դառնում. Ալեքսիսդ քեզ յետ է տըր-
ւում:»

Եւ ճեպով իջնում էր բլուրն ի վայր, երբ
յանկարծ իւր յանցաւոր վարքի զգացումը մի սոս-
կալի սարսուռ ածեց վրէն. ոտները գետնին մնա-
ցին դամուսած. պաղ քրտինքը տուեց բոլոր մարմնի
վրայ. «Ես երևամ հօրս աչքին... այս արածիցս
յետոյ...: Ո՛հ զուր էր կարծել թէ կը կարողանամ:
Ո՛չ, ոչինչ համարձակութիւն չունիմ, շատ մե-
ղաւոր եմ: Ի՞նչ երեսով ներկայանամ նորան:
Ի՛նչպէս յուսամ թէ նա դարձեալ կըսիրէ ինձ, երբ
ես իմ վատչեցելովս դաշոյն մտեցի նորա սիրտը: Կը-

մերժէ ինձ, կ'անիծէ ինձ նա: Եւ արժանի եմ ես:
Ինձ այլ ևս թողութիւն չկայ: Ես մի անառակ որ-
դի եմ, մի հրեշ եմ՝ բոլոր բնութեան սոսկանք:

Թշուառ Ալեքսիսն այս խօսքերն ասելով ընկ-
նում է կանանչի վրայ գետին, թաղուած ամենախիստ
ցաւի մէջ:

Չուշացաւ, մի ներքին ձայն, մի երկնային ձայն,
լսելի եղաւ սրտի խորը և ոգի տուեց նորան. «Ո՛հ,
գոչեց, հայրը Աստուծոյ պատկերն է, և իւր ողոր-
մածութիւնը, ինչպէս Աստուծն, անհուն է: Չէ՛,
որքան էլ որ անարժան եղած լինի իմ վարքս՝ ես
անդարձ չեմ դատապարտուած. չէ՛. հայրս ինձ ա-
տում չէ, անիծելու չէ ինձ: Ա՛րնդունի գթով իմ
ապաշաւանքս: Եթէ մերժէ ինձ իբրև իւր որդին ըն-
դունելու, ինչ կայ կըրնդրեմ ընդունի իւր դասը
աշխատող ծառաների կամ զործաւորների թուի մէջ:
Աշխատանքով ու կամաւորապէս անձս զրկելով՝
կըքաւեմ մեղքերս, կը հաստատեմ զղջմանս ան-
կեղծութիւնը, կարժանանամ որ նա կրկին բաց
անէ ինձ իւր զիրկը և նորից կոչէ ինձ իւր
որդի:»

Անելքն հաստատ վճռեց. բայց գունաթափ է,

բոլոր անդամները դողում են, և չգիտէ ինչպէս իմաց տայ գալուստը ու ներումն խնդրէ: Վերջապէս այն ժամին՝ որ գիտէր թէ հայրը սովորաբար զբաղուած է լինում պարտէզներում, ծածկաբար տուն է մտնում. այնտեղ գտնում է մի պառաւ հաւատարիմ կնոջ՝ որ իւր մանուկ տարիների խնամածուն է եղել, և որ նորան տեսնելով՝ զարմանքից ու խնդութիւնից քիչ մնաց ուշագնաց լինէր: Նորա հետ ներս մտաւ հօր սենեակը: Ի՞նչ տեսնէ. դարձեալ իւր պատկերը միւսնոյն տեղ կախուած, այն՝ որ ինքը կարծում էր թէ արդէն բնակարանից արտաքսուած պէտք է լինի: Այդ բանը զօրացուց իւր հոգին, միտքը բաց արաւ նորան մի ճարտարագիւտ միանգամայն և զթաշարժ հնարք գտնել տալով, որով յայտնէ հօրը իւր դարձրն ու զղջումը: Վայր է բերում պատկերը ու մատիտները ձեռքն է առնում:

Պատկերը ներկայացնում էր վաղ օրերի Ալեքսիսը, աչքերը ցնծութեամբ ու անմեղութեամբ լի, շքութունքների վրայ ժպիտն ու երանութիւն: Եղծում, ուղղում ու շտապ փոփոխում է գլխաւոր գծերը՝ Այնքան ծիծաղ կերպարանքը մի քանի րոպէ վերջը երևեցաւ ցաւագնած և ամօթահար, զեղջը նկատ

րուած է թաց աչքերի մէջ: Միւսնոյն նմանութիւնն է, բայց վշտահար և աղաչաւոր Ալեքսիս:

Մէկ էլ սանդուղների վրայ հօր ոտների ձայնն առնելով, շնտ՝ պատկերը տեղն է գնում, ու ինքը քաշուում մտնում մօտի խուցը:

Հայրը գալիս է սենեակը, աչքը ըստ սովորութեան նախ ածում է որդու պատկերի վրայ: Տեսնելուն պէս ձայն է արձակում, բայց անէծքի ու բարկութեան չէ ձայնը երանութեան ու խնդութեան գանգիւն է. «Որդեանկս է իմ սա. Ալեքսիս է. զղջում է, յետ է դառնում ինձ: Ե՛կ, ո՛հ, ե՛կ. հայրդ քեզ կանչում, ներում է քեզ»:

Ալեքսիս խցէն դուրս է վազում ընկնում է հօր ոտները, որ նորան վեր է հանում և սղմում է գրկի մէջ: Հաշտութիւնը կնքուեցաւ ամենաջերմ գորովներով:

Այդ օրէն ի վեր Ալեքսիսը անպարտաւ վարք ունեցաւ, և արժանացաւ ուրիշ երիտասարդներից իրրև օրինակ դիտուելու:

Շնորհաւորենք ուրեմն նոցա՝ որոնք, նորա նրման, զղջումով դառնում են գէպի առաքինութիւն.

որդոց, ծառաներին, որ խորին յարգանք տան նոցա. պէտք է սովորեցնենք մեր մանուկ երեխաներին՝ որ պատուեն նոցա, որքան մենք ենք պատուում:

Եթէ հասնի մեզ մեր ծնողքէն բարձր գիտութիւն ստանալ, դա մեզ պէտք չէ գոռոզացնէ և կարծել տայ թէ մենք նոցանից զերազանց ենք. վասն զի մեզ լաւագոյն կըլինէր խոր տղիտութեան մէջ մնալ, քան այնպիսի ուսումն ստանալ՝ որն որ ապականելու էր մեր սիրտը ու մեզ անզգամ ու ապաշորհ որդիներ էր անելու:

Պատահում է որ մի երիտասարդ իւր հանձարով, արիութեամբ կամ նախախնամութեան առանձնապէս շնորհիւր՝ իւր առաջին պայմանից զերիվեր է բարձրանում. հարստանում, հզօրանում, ակնաւոր է լինում: Ապա իւր համար մի անպատում երջանկութիւն պէտք է համարէ նա՝ իւր վայելած առաւելութիւններին բաժանակից անելով հօրն ու մօրը. դա իւր պարտքն է. բայց դոյն պարտքի կատարումը այնքան սիրելի բան է, որ և միւլենոյն ժամանակ զուարճութիւն կոչել կարելի է: Եւ զուարճութիւնների մէջ դորանից հեշտալին, պատուելին ու մաքուրը չկայ:

Տեսնուած են, ասում են, երբեմն անզգամ որ-

դիներ՝ որոնք, զիտուն կամ հարուստ լինելէն վերջը, ամաչում էին իրենց ծնողքի ազքատութեան ու անբարեձև հանդերձների վրայ: Զկարծեմ թէ այդ տեսակ հրէշներ կանանան. կամ, եթէ կան էլ, թուով սակաւ են, և պատուաւոր մարդոց աչքում անարգանքի ու սոսկալու առարկայ են:

Ի վերջոյ՝ մեր հօրն ու մօր պարտական եղած յարգանքը նոցա կեանքի հետ վերջանալու չէ. խրնամբով պէտք է պահպանենք մեր սրտում՝ նոցա յիշատակն ու պատուենք նոցա անունը:

ԴԵՐՁԱԿՆ ՈՒ ՍԵՂԱՆԱՌՐԸ:

Բօս զաւառի մի զիւղի մէջ մի ծեր դերձակ էր ապրում, շատ աղքատ՝ բայց շատ գոհ իւր վեճակից: Կինն էլ կենդանի՝ հետն էր և զուարթութեամբ համբերում էր նորա աղքատութեանը, ամէն ջանք անում էր որ նորան կեանքը քաղցր թուեցնէ: Երկուսն էլ շատ տարեց էին, բայց քաջառողջ ու բաւական լաւ աշխատում էին:

Իրենց մի հատիկ որդին, անունը Ֆրանսուա, որին իրենց աղքատիկ պայմանից վեր էին կրթել տուել, զաղուց արդէն Հնդկաստան էր դնացել իւր համար բազմ որոնելու: Քսան տարի անցել էր որ նորա նորան չէին տեսած. նորա վրայ էր յաճախ իրենց խօսքը. հանապազորդ աղաչում էին Երկինք որ անաէր չթողնէ նորան, և անպակաս իւրաքանչիւր կիւրակէ զիւղի երէցին, որ նոցա շատ յարգում ու լաւութիւն էր անում նոցա, խնդրում էին որ յանձնէ աղօթաւորներին նորան իրենց աղօթքի մէջ յիշելու:

Որդին էլ իւր կողմից մտէհան չէր անում նոցա: Շատ անցքեր էին գլխէն անցել և իւր լուրը նոցա

հասցնել չէր կարողացել, ըստորում այնպիսի երկեր էր գնացել, որ Ֆրանսիայի հետ ոչ մի հաղորդակցութիւն չունէր: Սեղանաւոր դարձաւ, իւր խելացի վարքով ահազին գանձ դիզեց, և յետ եկաւ Ֆրանսիա, որպէսզի փարկուճ սեղանաւորի տուն հիմնէ:

Ապա՝ երբ տունն ընտրեց և իւր հաստատուելուն համար ամէն բան կարգի դրեց, նոր վճռեց որ ինքն իսկ տեղեկութիւն հարցնէ իւր ծնողքի զրբութիւնից:

Սպասաւորներին ասելով որ իւր վրայ չմտածեն, ձի հեծաւ՝ առանց մէկին իւր հետ ընկեր վերցնելու՝ և զնայ իւր ծննդեան տեղը:

Երեկոյեան տասը ժամն էր մօտ, և ծերունի դերձակը իւր կողակցի հետ պառկած էր. յանկարծ տնակի դռան ծեծի ձայնից՝ նորա քներից վեր թռււան: Հարցին թէ ո՞վ է ծեծողը. «Բացէք, բացէք, ասաց նոցա սեղանաւորը, ձեր որդի Ֆրանսուան է:

— Ուրիշին զնացէք, գողեր, պատասխանեց բարի ծերուկը. ձեզ համար այստեղ բան չկայ. Ֆրանսուան, եթէ Աստուած նորա կեանքը պահած է, այժմ Հնդկաստանում է:

Է՛լ Հնդկաստանում չէ՛ ձեր որդին, կրկնեց սեղանաւորը. յետ է եկած, նա է որ ձեզ խօսում է. ներս առէք նորան տուն:

— Վեր կենանք, Յակոբ, ասաց այն ժամանակ կինը. իրաւ, կարծեմ որ Ֆրանսուան է. ինձ թըւում է թէ ձայնից նորան ճանաչում եմ:

— Իսկոյն երկուսն էլ վեր կացան՝ շուտով հագան. հայրը լոյս վառեց և մայրը դուռը բանալու գնաց: Սա նայեց Ֆրանսուային, ճանաչեց, վիզն ընկաւ, և գրկի մէջ սեղմեց նորան: Հայրն էլ, սիրտն ելած, փաթաթուեց համբուրեց որդուն. և այդ երեք անձինք, զմայլած՝ որ այնքան բացակայութենէ վերջը միասին ժողովուած տեսան իրար, չէին յապենում փոխադարձաբար իրար գորովելու բաղձանքից:

Այդքան անուշ խանդաղատանքից վերջը, սեղանաւորը ձիւ բերնից սանձն առաւ ու ձին ախտաբաշից կապեց՝ տանը սնունդ տուող կովի հետ: Ապա պատմեց ծնողքին իւր ճանապարհորդութիւնը և զբըխէն անցած արկածքները:

Այնպէս մանրապատում արաւ բոլորը, որ անտարբեր մարդուն թերևս ձանձրութիւն բերէր. բայց որդու իւր գլխին եկած բաները պատմելը հօր

ու մօր ուշադրութիւնը չի յոգնեցնում. ամէն մանրամասնութիւն նոցա համար հետաքրքրական է. ականջըով ականջ էին դնում նորան, ու նորա ասած ամենաթեթև բաներն էլ խնդութիւն կամ վիշտ էին պատճառում նոցա:

Պատմութիւնն երբ աւարտեց, ասաց նոցա թէ ինքն եկել է իւր հարստութեան մի մասը՝ նոցա նուիրելու, և հօրը խնդրեց որ այնուհետև չ'աշխատի: «Ո՛չ, որդեակ, ասաց նորան Յակոբը. ես սիրում եմ իմ արհեստս ու ձեռքից չեմ թողնել:

— Վայ. ի՛նչ, միթէ ժամանակը չէ՞, որ էլ այսուհետև հանգստանաք: Ես ձեզ չեմ առաջարկում որ դաք ինձ հետ փարիզում ապրելու, վասն զի զիտեմ թէ այն մեծ քաղաքում մնալը ձեզ ախորժիկ չի լինիլ: Ես չեմ մտածում ձեր խաղաղ կեանքը աղմկել. բայց զոնէ տաժանիկ աշխատանքից վաղ անցէք, ու ձեզ համար հանդարտ այստեղ ապրէք, կարող էք:

Մայրն հաւանեցաւ որդու առաջարկութեանը, Յակոբն էլ զիջաւ նոցա կամքին: «Բարի ուրեմն, Ֆրանսուա, ասաց նա, կամքդ անելու համար՝ ես էլ այսուհետև չեմ աշխատիլ զիւղի բնակիչների

ԾՆՈՂՔԻՆ ԶԱՐԿ

ԱԿՆԱԾՈՒԹԻՒՆ, ԽՆԱՄՔ ԵՒ ՊԱՐՏԱԶԳԱՅՈՒԹԻՒՆ

Բաւական չէ ծնողքին լոկ սիրելը, այլ գործով պէտք է ապացուցանել, առանց նոցա բաղդաւորութեանը նպաստող որ և է բան անտես անելու, որ սրբարեւ սիրում ենք:

Խնամոտ և հաճելի բարք մենք պէտք է նոցա միշտ ցոյց տանք. առանց այդ վարմունքին՝ մարդս ոչ ինքը երջանիկ կըլինի, ոչ էլ ուրիշին կ'երջանկացնէ:

Երբեմն դժուար է այդ առաքինութիւնը ձեռք բերելը. և նախ՝ մենք մեզ յաղթելու դժուարութիւնը կ'ունենանք. մեզ ծանր կըլինի միշտ չ'ասել այն, որ մեր սիրած մարդոցը անախորժ է. բայց միանգամ որ այդ սովորութիւնը ըստացուաւ, այնուհետև մեր ջանքը մեզ համար այլ ծանր չի լինիլ, ու մենք էլ մեր այդ վարմունքից թանգագին բարիք կը ժողովենք:

Միշտ վատ բան է բարկանալը և տհաճ երեւելը. բայց հօր ու մօր դէմ բարկանալը և նոցանից

տհաճիլը՝ ոչ թէ միայն անխելք ու այլանդակ լինել ասել է, այլ և շատ յանցաւոր:

Զուր է ասելը թէ՛ եթէ մէկը այդպէս իւր չափից դուրս է անցնում, այդ նորա բնութեան տաքութիւնից է, և արածը սրտով չէ: Այդ տեսակ զանցուձեները բնաւ արդարանալ կարող չեն:

Հաճոյակատարութիւնը, քաղցրութիւնը, պարտաւորեցուցումը սիրելի յատկութիւններ են, որոնք մարդկային ընկերութեան աղն են: Երբ օտարների հետ յարաբերութիւն ունինք՝ դ՛ր՛յ յատկութիւնները անխաբ միջոց են նոցա բարեմտութիւնը առ մեզ գրաւելու. գերդաստանի մէջ՝ դո՞քա պարտք են: Պարտք են մանաւանդ հօր ու մօր վերաբերութեամբ, որոնք իրենց արած այնքան բարիքների փոխարէն իրաւունքով պէտք է վայելեն ոչ միայն իրենց որդոց յարգանքը, այլ սիրայորդոր պարտազգացութիւնները:

Ուստի միշտ համբերող, կամակատար, և խնամոտ լինինք առ մեր ծնողք. միշտ հաճելի կերպով պատասխանենք նոցա. և մանաւանդ այն խնամքներն ու անթիւ պարտազգացութիւնները, որ ճշմարիտ գութը տուն է տալիս մեզ, ունենանք նոցա համար:

խնամել էր մօրը. տնտեսած փողը ծախսեց, փոր-
րիկ հողն էլ ծախուեցաւ: Վթախրա մարդիկ ծնօ-
ղատեր աղջկան օգնութիւն հասան, որի անձնուի-
րութիւնը աշխարհքին հիացք էր:

Տարաւարուց վերջը հայրը մեռաւ և Յովհան-
նա դասն կերպով նորա սուգն արաւ:

Մի օր մէկը նորան ասաց. «խեղճը ազատուե-
ցաւ, դուք էլ նոյնպէս: Այն կնէքան էր, տանջ-
ւում էր: Եւ յիշում գտնեցէք մէկը պահուեց:»

— Ինձ այգ պէս խօսողները ասաց
Յովհաննա, կարծում են թէ ինձ կըմը-
խեթարեն, բայց նոքա ինձ ցաւ են
յաւելացնում. շքիտ են սրբան արժու-
էի խեղճ հօրս... վերջ պէս, Աստ-
ւած նորան իւր վարձքը առեց, ես
էլ իմա կ'ունենամ:

Յովհաննա մենակ մնաց մօրը հետ. մանում
էր, գնում էր խառնուձք, ու ժամանակի մեծ
մասը հիւանդ մօրը խնամելու էր նուիրում:

Մայրը, որ մինչ այն ժամանակ ցլուկ էր
ման գալիս, բորբոսիկն կորուց աքի լոյսը, և անդա-
մապոյժ վայր ընկաւ. նորան պէտք էր վեր հանել,
պանկեցնել, նստեցնել: Յովհաննա բասն տարի

ժամանակ մի գիշեր անց չկացուց որ վեր չկենար:
Անհաւատալի բան է նորա իւր մօր վրայ տարած
խնամքի մանրամասնութիւնը:

Պատու մայրը շատ աղօթատէր էր. ողջ օրը
բնդիւթուի մէջ ընկած աղօթում էր: Մի օր, վե-
րափոխման հսկման երիկունն էր, ասաց նա աղջ-
կան. «պարտ օգոստոսի Մայր Աստուածածինն է, շատ
կ'ուզի ժամ գնալ:»

Նորա տեղ կթէ ուրիշ վաւերներ լինէն,
անձնանուէր լինելով էլ հանդերձ, զուցէ դժուա-
րութիւն հանէին նորան տեղ ասնել այնպէս հի-
ւանդ անկեալ, թէկ լատազայն դրութեան մէջ զրո-
նուէին նոքա ու փոխադրելու միջոցներ էլ ունե-
նային... Բայց Յովհաննան խիոյն պատասխանեց.
«Ժամ մես սուղում գնալ. շատ լատ, մայ-
րիկ, կ'էր թանք. այն է սքեղ կըտա-
նեմ, անհոգ է գիրս» և ստաւ ձեռքն ու համբու-
րեց վասն զինա միշտ բազմր գգուանքով ու զը-
թատած մտադրութեամբ է նորա հետ խօսում:

Միւս օրը, Յովհաննա ձախ ձեռքով բաղկա-
թուն է վերցնում, մըտով պատու մօրն է պահ-
պանում, ու այդպէս խեղճ թուլացածը աղջկայ-
թեք մտած, ինքն մի քանի քայլ գնաց ի առջ

կանգ առան. մի րուպէ Յովհաննա նորան բազկաթո-
ռի վրայ նստեցուց. ապա կրկին վեր հանեց, շարու-
նակեցին:

Այդ տաժանելի ճանապարհը որ մարդ հինգ
րոպէսէ մտնեց կը կենար, երեք քառորդ ժամ
տևեց:

Յետ դարձին, որ նոյն կերպով կատարուեցաւ,
Յովհաննա բողբոջին ուրախ էր. «Ապա, աստ,
սիրելի մայրիկ, լաւ տղութեցի՞ր Աստը-
ծուն: Հիմա դո՛հ ես, չէ: Կարծեմ
յոգնած չես, հէ:»

Այնուհետև դոյն աշխատալից երթեկը ա-
մէն անգամ կրկնուում էր, երբ որ ցանկանում էր
բարի կլինը:

Յովհաննա իւր համար էր պահում բարե-
գործութեան սենեակից արուած սև հացը, խոկ
մօրն համար սպիտակ հաց էր դնում: Յետոյ, որ-
քան իրեն հնար էր, նորա համար կարագ, պանիր,
կաթ էր գնում: Իսկ ինքը միակ կարթու էր ու-
տում:

Մի օր մէկը նորան բաժին ղրկեց, մի հատ
մաշիկ կարիանդակ, որից ամենևին կերուած չէր:
Շատ անցաւ, նորա մօտ դեռ այն խմորիդեմից տես-

նեով: շատերը զարմացած հարցին. «Կարկանդակը
դեռ կերել պրծել չէ՞ք?»

— **Մ**օրս համար եմ պահպանում.
հացի ժամանակ կտոր կտոր կտրում
տալիս եմ, և այդ նորան կշտացնում
է:

— **Ապա** դուք նորանից չէ՞ք ու-
տում:

— **Մ**եղք կըլինէր որ ես ուտելի ու-
խեղձ կնոջ բաժինը պակսեցնէի. նոր
բափօրիկ վայելքն է դա... Ո՛հ, չտես-
նեմ, չլսեմ ու միշտ տանջուել... Այդ
ինչ բան է որ ես ինչ որ կարող եմ ա-
նեմ նորա համար:»

Վասն զի խեղձ հիւանդը բողբոջին խլացել
էր:

Այդքան տկարութիւնների մէջ՝ փարէլ
մայրը այնպէս լաւ նրստած էր բազկաթոռի վրայ,
այնպէս մաքուր հագնուած, որ իսկոյն երեւում էր
թէ լաւ հոգացուում էր:

Քաշած տանջանքն երբեմն դառնացնում էր
նորա բնութիւնը և նա երթալով աւելի դժուար էր
շահուում. բայց Յովհաննայի քաղցրութիւնն ու-

կամակատարութիւնը անպակաս արեղան: Ասու՛մ էր իրեն տեսութեան եկողներին:

Այս, եթէ դուք նորան յանաջ ճանաչած լինէիք, մի արժանաւոր կիւնէք նա. դառն օրերի մէջ իւր ընտանիքը սնուցանելու աշխատողը նա էր: Քաղցր ու բարի էր նա: Այսքան երկար հիւանդութիւնից յետոյ, եթէ մի փոքր չարչարող է դարձել, դա էլ իւր մեղքը է. այնպէս մեղաւոր իւր գեղեցիկ վարձքը վըստանայ նա. Աստուծոց անուանուածն է:

Այդ գերազանց ազգայ վարձքն էլ մեծ կը լինի Աստուծոյ առջ. նա արժանի է իբրև օրինակ յիշուելու:

Եւստի Երեմիայի մասին խոսելու համար ինչ որ ասուցիք, այն սխալ գրանցումներն են, որոնք ասուցիք. որոնք ասուցիք: Եւստի Երեմիայի մասին խոսելու համար ինչ որ ասուցիք, այն սխալ գրանցումներն են, որոնք ասուցիք. որոնք ասուցիք:

ԵՂԲԱՅՐԱՆ ԵՎ ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Մեր ծնողքին տալիք յարգանքի լուսադոյն ապացոյցների մէկն էլ է սիրով սիրել մեր եղբայրներին ու քոյրերին, ու նոցա հետ կատարեալ հաշտ ապրել միշտ:

Մի հօր ու մօր աչքում ոչինչ այնքան հաճոյական չէ, որքան իրենց զաւակների մէջ միաբանութեան պատկերը:

Ուժեղը պէտք է իւր առաւելութեամբ զիջանի. նամանաւանդ պէտք է կամակատար ու քաղցր լինի տկարագունի համար: Տկարագոյնը, իւր կողմից, պէտք է իրեն ցոյց տրուած համբերութեամբ զիջանի, այլ խնամքով պէտք է զգոյշ կենայ որ իւր եղբայրներին չզայրացնէ:

Եղբայրների մէջ հասցոյանք ու ծեծ բնաւ երբէք ճանաչուած պէտք չէ լինէր: Եւստի կարող ենք օտարների հետ լաւ ապրել, եթէ չենք կարող միևնոյն զերդաստանի անդամների մէջ միաբանութիւն պահպանել:

Մեզ համար նոյնպէս պարտք է անդադար բարի օրինակ տալ նոցա, և մեր վարքովն ու խրատ

մ լըւնից Եւթանայիցն աքում թ ցա՛յն յմբղած : յնս
 ԾԱՂԿԱՔԱԴ
 Եւթանայիցն աքում յմբղած
 ա յոգիս թ ցա՛յն աչոյն գմղոց Եւ զմեղացոյց
 ցնայի գաղթ միմից Եւթոյ յոգմըց մամ Եւթոյնանայ

Փարիկ Եւզենիան գարնան ամենագեղեցիկ
 ընրը անկողնի մէջ էր անցուցել : Հիւանդ քաղու
 թեան ժամանակ, երբ արդէն ուժերն սկսում էին
 վնայ գալ, ծաղիկները իւր միտքն եկան, և հարցուց
 թէ արդեօք նոքա այս տարի այնպէս գեղեցիկ են,
 ինչպէս անցածը: Եւզենիան ծաղիկ շատ էր սի
 բում, բայց դեռ դուրս գնալ կարող չէր՝ որ եր
 թար ժողովէր:

Ուստի Եւզինիոս, նորա երէց եղբայրը, կը
 թոցիկն առաւ, ու մօրը ծածուկ ասաց. «Ահա ես
 գնում եմ՝ նորա համար դաշտի ամենագեղ ծաղիկ
 ները քաղելու: Ո՛հ, ո՞րքան ուրախ պիտի լինի՝ յետ
 որ դառնամ:»

Եւ նա այս առաջին անգամն էր գնաց դաշտը.
 վասն զի քրոջ հիւանդանալու օրից՝ նա սենեակից
 դուրս չէր գնացել: Նորան գեղեցիկ երևեցաւ գա
 բունը, գեղեցիկ քան ամէն գարուն. քրոջն ազա
 տուած տեսնելու ուրախութիւնն էլ՝ բնութեան
 մէջ աւելի հրապոյր էր գտնել տալիս նորան:

Եւզինիոս ուրախ ուրախ մէկ կողմից միւսն
 էր վազ ասլիս, բլուրն ի վեր՝ բլուրն ի վայրեցնում
 իջնում: Սոխակներն կրգում, մեղունները տըզվը
 գում, թխթեւները իւր չորս կողմը թաթռում, և
 զուարթագեղ ծաղիկները շախտաբար տակը վառվա
 ռում: Ինքը, երգը բերանը, մէկից միւսին էր վառ
 ւում:

Եթոցիկը շուտ լցնուաւ: Նորա երեսին դրեց մի
 սիրունիկ պահի, որ շինեց՝ խտախ ծղև վրայ կարմիր
 հաղարջի հատիկներ շարան շարան ունելով: Ապա
 ժպտան երեսին աչք ձգեց մէկ գործի վրայ՝ ու քա
 շուաւ նստաւ կազնի ծառի շքի մէջ, փափուկ մա
 մուռի վրայ: Այս տեղից հանգարտիկ դիտում էր
 շքեղ գարունքով զարգարուած դաշտը, և հեշ
 տանքով ակնջ էր գնում իրար պատասխանող
 սոխակների դալայեկին: Դադրած էր, և քունն ա
 ռաւ աչքերը:

Նորա այդպէս անուշակ քնած պահին մի մեր
 ըիկ էր հասաւ: Երկինքը մթնեց, փայլակները խա
 ղացին և ամպն որոաց: Կաղնու օտտերի մէջ քա
 մին յանկարծ մնչեց: Երեխան վեր թռաւ ու
 զարթաւ: Տեսաւ իւր շուրջը երկինքը պատուած ըս
 պառնագին ամպերով, արեգակի էր ոչ մի նշոյլ:

դաշտի վրայ լուսատու: Զարթնելուց յետոյ մի բարկաճայթ շանթ դրողեց օդը: Խեղճ երեսան ապշած մնաց այդ անահնկալ յեղափոխութեան առաջ:

Աւանդ, այդպէս աշխարհքումն ճաշակուած վայելքները յաճախ տակնուվրայ են լինում յանկարծական մրրիկներէ:

Անձրևի խոշոր կաթիլներ կազնու տերևներէ միջից վայր թափուել սկսան: Սարսափած երեսան խլեց կթոցիկն ու վազ տուեց որ պրծնի: Երակը նորա գլխի վրայ էր կախուած, անձրևն ու փոթորիկը սաստկացան. ամպն էլ գոռում էր ահագին ձայնով: Եւզինիոսի զգեստները շուտով խրխմեցան անձրևից. ջուրը վազում էր մազերն և ուսերն ի վայր, և նա հազիւ յառաջ էր տանում ճանապարհը: Դժբաղդութիւնը լրիւ լինելու համար, քամին մի սաստիկ փչելով մնաւ կթոցիկը և ցիրուցան փռեց գետին այնքան խնամքով հաւաքուած ծաղկները:

Ախ, Տէր Աստուած, կանչեց, այնքան չարաբուելէս զկնի որ քրոջս մի փոքր ուրախայնեմ, այժմ բոլորը կորած պէտք է լինի: Սիրար նեղացած գետին ձգեց դատարկ կթոցիկն, ու լալով և բարբափին ջուր կտրած տուն դարձաւ:

Արրիկն անց կացաւ և երկինք պարզեց, թռչունները կրկին երգերն սկսան, և հողագործը դարձաւ իւր աշխատանքին: Օլը պայծառացել էր. անուշ հանգիստը թագաւորում էր հովտի մէջ, բլուրների վրայ: Համայն բնութիւնը նորոգուած էր կարծուում. դաշտարնակներն էլ խնդութեամբ ու շնորհակալութեամբ լին աչքերը դէպի ամպերն էին վերցընում, որոնք իրենց արտերին օրհնութիւն ու առատութիւն բերելուց յետոյ՝ քաջուում հեռանում էին:

Եւզինիոս իւր վհատութեան ու բարկութեան վրայ ամօթ կրեց: Առիկ մեջիկ յետ դնաց գետին ձգած կթոցիկը փնտռելու ու նորից նոր ծաղիկներով լցնելու: Կթոցիկը դեռ բլրի դառիվայրի վրայ ընկած կար. մի մացառի էր դէմ առել ու այնպէս պաշտպանուել խտաշունչ քամու դէմ: Երեսան վեր առաւ այն. և որքան եղաւ իւր զարմանքն ու ցնծութիւնը, երբ աչքերը իւր շուրջն ոլորելով՝ տեսաւ որ անձրևը բիւր նոր ծաղիկ էր բուսուցնել: Բիւր կոկոմներ բացուել էին, և յօղի կաթիլները աղամանդի նման փայլիլում էին թերթիկների վրայ

Ապա արեգակը վայր իջաւ սարի ետևը. երե-

նից, այն ժամանակ որ նոցա ու մեր դուրսից
փոխուում է, երբ նոքա տկարանում ու մենք զորա-
նում ենք:

Այդ պարտականութիւնը խղճմանըով կատա-
րած ժամանակներս՝ մենք զովեւորի պիտի աչք չու-
նենանք, վասն զի մեր պարտքն ենք լնում: որից
փախել կարող չենք. մեր տալքն ենք հատուցա-
նում: Դոյնը չհատուցանողը ոչ թէ միայն մի թը-
շուառական է, ամէն բարեմասն զգացմունքներէց
թափուր, այլ մի հաւատազեղծ պարտապան է:

Մի բարեխիղճ շինականի հանձարաւոր պա-
տասխանովը, որ նա մի օր մի իշխան մարդու արաւ,
մենք լաւ ենք հասկանում զոյն այդ բանը:

Իշխանը հարցուց նորան թէ ի՞նչ է անում
իւր քրտնքով վաւտակած փողովը:

Երեք մասն եմ անում, պատասխանեց զիւ-
ղականը. առաջինովը պարտքերս եմ վճարում. եր-
կորդովը իմ ու իմ կնոջ ծախսն եմ հոգում. իսկ
երրորդը, երրորդն էլ մեծ տոկոսով փոխ եմ տա-
լիս:

Ի՞նչ ես ուզում իմացնել, հարցուց դարձեալ իշխանը:

— Ահա ինչ, պատասխանեց զիւղացին: Առա-
ջին բաժնով պահպանում եմ ծեր ծնողքիս, պար-

տիքս հատուցանել չե՞ այդ: Երրորդովը մեծացնում եմ
երեխաներս. մեծ տոկոսով փոխ տալ չե՞ այդ:»
Ապա պատասխանը հիացուց իշխանին, որին բարի
զգացմունքներով ու խելքով լի թուեցաւ այն:

Գլխոտ և երախտագէտ որդին իւր այդ պար-
տականութեան կատարումը ճշմարիտ բաղդաւորու-
թիւն կը համարէ իւր անձին:

Ի՞նչ քաղցր է մարդուս, արդարեւ, սիրեցեալ
ծնողքին նուիրել իւր խնամքն ու ուժերը: Քանի
քաղցր է՝ աշխատանքի պտուղը նոցա մատուցանել:
Ո՞րքան քաղցր է նոցա վերջին օրերի վրայ սփռել
զիւր կեանքի և բաղդաւորութեան հեշտութիւնը:

Անբացատրելի երանութիւն է թէ մարդս կարողա-
նայ ինքն իրեն ասել:

Երբէք, այն երբէք, ծնողքէս ստացած բարի-
քիս ամենափոքր մասի չափն էլ հատուցանել չեմ
կարող նոցա: Այլ եթէ երախտագիտութեամբս
նոցա բարերարութեան փոխարէնը լիով հատուցա-
նելու հասնիլ չեմ կարող, գէթ կ'աշխատիմ մօտ
հասնել: Նոքա իմ առաջին քայլերս հաստատեցին,
ես այսօր նոյա դողդոջ գնացքին օգնական կրլինիս.
Նոքա ինձ օգտուէտ խրատներ տուին, ապացուցա-
նեմ թող ես այսօր որ օգուտ քաղիլ եմ. նոքա

ինձ իմ ապրուստս պատուաւորապէս ճարելու վիճակի հասուցին, ես այսօր նոցանը կը հողամ. նոքա իմ մանկութեանս վրայ հսկեցին, ես այսօր նոցա ալւորութիւնը կը բողբաւորեմ:

Այդ է ճշմարիտ երջանկութիւնը, որի համբ վառնէ այն մարդը, որի սիրտն ազնիւ ու մաքուր է: Հերիք չի համարում նա հսկել որ իւր ծնողքը ոչինչ պակասութիւն չ'ունենան. աշխատում է թէ հարկաւորիցն էլ աւելի ունենան. լաւագոյն է համարում զրկել իւր անձը, որ կարողանայ նոցա այնպիսի վայելքներ ճարել, որոնցից մարդս ուրիշ հասակուս կարող է հրաժարուել, բայց որոնք ամբողջ ու սիրովում են ծերութեան դառնութիւնները:

Նա հերիք չէ համարում անբազում կերպով իւր այդ պարտքը լրացնելը. այլ այնպիսի շնորհք ու այնպիսի նուրբ զգուշութիւն է բանեցնում կատարման ժամանակ, որ արածի արժէքն աւելացնում ու զինը երկպառակում են:

Եւ հանապազօրդ աղաչում է Աստուծուն որ պահպանէ իւր ծերունի ծնողքին, որոնց ներկայութիւնը՝ գերդաստանի ծոցում՝ երկնքի օրհնութիւն է:

Այդպէս պիտի խնամենք մեր ծնողքին իրենց դառամութեան մէջ:

Ուրիշ դէպքերում, ուր նոքա մեզ պէտք կ'ունենան, մեր սիրտը մեզ բաւական կ'առէ թէ ինչ պէտք է անենք: Նոցա իրենց հիւանդ ժամանակ հողալու, կամ վշտերը դազարեցնելու համար՝ « մէն նեղութիւն պատրաստ պիտի լինենք քաշելու, « մէն բան աչք առնելու, ամէն բան անելու:

Իրենց որդիքների համար զօհուող սքանչելի հայրեր ու սքանչելի մայրեր սակաւագիւտ չեն, բայց նոյնպէս տեսնում են արխասիրտ ուստրներ, ինքնանուէր դուստրներ՝ որոնց զեղեցիկ ընթացքը զարմանալի է ու զթաշարժ:

Այդ զեղեցիկ ու ազնիւ օրինակները անբաւ չառ են:

Մենք միայն յիշենք Աւրիլակեցի երիտասարդինը:

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԱԼԻՍԵՐ

Մի Աբրիլակեցի առաքինի և հաբուստ տիկին, անախունեցի դժբաղդութիւններով, կորոյս իւր ամուսինն ու գոյքը: Տիկին վիժիէր էր իւր անունը:

Մի տղայ էր իրեն մնացել, որն որ Աբրիլակի դպրոցում գիշերօթիկ էր: Յովհաննէս վիժիէր քաջ աշակերտ, հեղահամբոյր, ջանասէր, ընկերներից սիրուած, վարժապետներից յարգուած մէկն էր: Ուսումնական տարուայ վերջը հանդիսաւոր պարգեւարաշխութիւնների ժամանակ միշտ շատ պարգև էր ստանում, բայց և այնպէս շատ համեստ էր:

Յովհաննէս լաւ գիտէր թէ իւր գերդաստանը դժբաղդութիւններ էր կրած, բայց սրբանը չզիտէր: Չգիտէր թէ իւր մայրը յետին չքաւորութեան մէջ է: Դպրոցի զլխաւորը, որ ազնուամիտ ու զթասիրտ մարդ էր, որոշել էր նորան իւր հաստատութեան մէջը պահել առանց թոշակն առնելու: «Երբ մեծանայ, ասում էր, թող հատուցանէ:»

Բայց այդքանը հերիք չէր. թոշակից դուրս՝ մանկահասակ աշակերտին հագուստ, գրքեր, սպիտակեղէն և ուրիշ շատ բաներ էին հարկաւոր: Ի՞նչ պէս ճարել:

Մի քանի զթառառ մարդիկ, նոցա հետ նա հանդապեալ և Զիւնբրի Մայր-Աստուածածնի երէցը, ընկերացել էին խեղճ գերդաստանի կարիքին՝ օգնութեան հասնելու: Համար՝ Բայց նոցա ընձեռած միջոցները բաւական չէին: Թէ միշտ հիւանդ մօր ծախսերը տեսնելու և թէ որդու պահելուն: Խորհուրդ արին իրենց մէջ, և վճռեցին աւքաւաւորուի հիւանդանոցում տեղաւորելու:

Բայց դոյն վճիռը նախուստ իմացնել պէտք էր մանուկ դպրոցականին: Յանձնարարութիւնը ծանր էր. կասկածում էին որ չլինի թէ մեծ ցաւ ու յուսահատութիւն պատճառէ: Երէցը յանձնառու եղաւ, և հետեւեալ հնարքը գտաւ:

Հինգշաբթի էր, գիշերօթիկների համար արձակուրդի օր: Երէցը դպրոցի զնաց Յովհաննէսի ետեւը, որպէս զի իւր մօտ տանի օրը անց կացնելու: Երեսնան, ուրախութեամբ լցուած, հապաւ նոր զգենաները՝ ինչպէս որ սովորութիւն է շրջագայութեան ու գրօսանքի զնայու ժամանակ հագնել, գոռարթ սրնով զնաց կրէցին հետ: Եւ բարոյ մասվոց:

Երէցը բերեց նորան իւր մօտ ու տեսնակր տարաւ: Սենեակում գրասեղանի վրայ ժամագիրքն էր դրուած: Երէցը, խոստանալով երեսնային որ շուտով

յետ կը դառնայ, գուրս զնաց իւր գործով, և նորան մենակ թողեց սեննկում:

Յովհաննէսը, միայնակ մնացած և զբաղմունք չգտնելով, տեսաւ որ ժամագիրքը սեղանի վրայ դրւած է. չկարծեց թէ անխոհեմութիւն լինի աղօթագիրք բանալը. սխալ էր անշուշտ. բայց սոյն համաձայնութեամբ ալ սխալը համարեա թէ ներելի էր: Առաւ ուրեմն ժամագիրքը, բաց արաւ: Գրքի միջից մի թուղթ սահեցաւ ու վայր ընկաւ գետին: Յովհաննէս վերուց ու աչքը ակամայ բովանդակութեան վրայ ձգեց: Ինչ տեսնէ. մօրը հիւանդանոց ընդունուելու տոմսակն էր:

Մութը պատեց երեսայի աչքերը, տոմսակը զողողուն ձեռքիցը վայր է ընկնում: Սխալ կարդացած կարծեց, ուստի կրկին առաւ տխուր թուղթը, կարդաց, ու դարձեալ կարդաց: Չէ՛, իւր մօր վրայ էր խօսքը, իւր մօր հիւանդանոց ընդունելու տոմսակն էր այն:

Երեսան զողաց ու սարսուռ թափու վրէն, մի ողորմուկ ձայն կուրծքից արձակուեցաւ. «Հիւանդանոցում. իմ մայրս հիւանդանոցում»:

Այդ ժամանակ նա մտկաբերեց իւր գերդաս-

տանի դրութիւնը, որին անտեղեակ մնացել էր նա մինչև այն օրը:

Մի քանի րոպէ խորասուզուած մնաց խոր մտածութեան մէջ. իւր գերդաստանի կորուսած երևելի դրութիւնը չէ նորա սրտին ցաւ տուողը. այն բաղդի վրայ չի մտածում, որին մի օր ինքը ժառանգ պիտի լինէր, և որ կորոյս: Իւր մօր վրայ և թէ միտածում, որ ամենադառն անտանելի օրն է ընկել, իւր մօր վրայ՝ որ կարօտեալներին հիւանդանոցում անտեղեակն ընկնելու օրին է սպասում:

«Ի՞մ մայրս հիւանդանոցում. ո՛հ, բնաւ ոչ»:

Այդ վայրկենից նա իւր միտքը վճռեց. որդեական գութը անլուր զօրութիւն տուեց նորան. թէև տակաւին մանուկ էր, բայց կատարեալ այրական զգաց ինքն իրեն, և այրականութեան յարստուութիւնն ու հաստատամտութիւնն ունենալու էր:

Դուրս ելաւ երեցի տնից առանց տեսնուելու, զնաց զպրոց, հանեց տօն աւուր զգեստը, հագաւ ամենօրեանը և յետ եկաւ:

Երեցը, որ նորա զնալուց յետոյ ներս էր մտել սենեակը, խիստ էր զարմացել նորան այնտեղ չգտնելով, և մտածութեան մէջ էր ընկել նորա աներևութանը վրայ: Երբ տեսաւ նորան յետ ե-

կած, նախ չնշմարեց հանդերձի փոփոխութիւնը, և ասաց նորան, «Ախ խեղճ աղայ, բացել յոս ժամազիրքը. դիտեցար ինչն ինչոց է, և քաշուել գնացել էիր լալու:»

— Ո՛չ, Տէր իմ քահանայ, ասաց տղան, լաց չեմ եղել: Մայրս հիւանդանոց պիտի չ'երթայ, որովհետև սրտի ցաւից այնտեղ կրմեռնի: Ես կըթողնեմ դպրոցը, կ'երթամ կրմնամ մօրս հետ: Ես իմ մօրս կըպահպանեմ:»

Այդպիսի արիական և անահնունելի առաջադրութիւն մի երեխայի կողմանէ՝ ապշեցուց քահանայի մտքը, որ չկրցաւ արտասուներ բռնել: Գթով զբրկեց երեխային համբուրեց և ասաց նորան «Բարեկամն, չկորցնես ապառազ. թող որ դու ինչպէս կարող ես պահպանել մօրդ:»

— Աստուած ինձ՝ զօրութիւն կուտայ, և այդ զօրութիւնը հասակիս հետ կ'աճի: Հաննցի՝ գեղեցիկ հանդերձս, որ այլ հաղնելու չեմ, ու կրծամ խեմ մօրս առաջին օգնութիւնս հասցնելու համար:»

Երէջը Յովհաննեսին իւր մտադրութիւնից շրջելու նպատակով կանչեց այն մարդոցը՝ որոնք սիրով խնամք էին տանում դոյն գերդաստանի համար, դպրոցի գլխաւորին, և նահանգապետին՝ որոնք ունայն աշ-

խատեցան նորան իւր առաջարկութիւնը փոխել տալու: Որդեակ, ասում էին նորան, մտածէ՛ ապագադ: Ռեամունքը յաջողես անում. դպրոցէն դուրս գնալիս՝ ասպարէզդ ընտրել կարող ես: Անշուշտ կառավարութիւնից մի քսակ դրամ կամ ուրիշ օգնութիւն կըստանաս: Կըլինիս ինչ ուզենաս, սպայ, ճարտարանկետ, բժիշկ, փաստաբան, ո՛րք կամենաս՝ ձեռք կրբերես այն դրութիւնը՝ որ քու գերդաստանդ կորուսել է, այն ժամանակ կը հանես կարօտներէ հիւանդանոցէն մօրդ. նորա ծեր օրերի պատիւն ունեցուկը կը լինիս:»

— Ա՛խ, պատասխանեց նա, դուք իմ մօրս չէք ձանձուցում. թէ որ նա հիւանդանոց մտնէ, վեց ամիս չբաշած կրմեռնի: Ինձ բաղդաւ օրութիւն էր ուսմունքս աւարտելու բայց զգում եմ որ պարտքս է մօրս հետ լինել, նորան խնամել, նորան պահպանել: Կը կատարեմ պարտքս, և երջանիկ կըլինիմ նոյնը կատարելովս:»

Յովհաննէս արդէն մի փոքրիկ սիրուն գրագրան ունէր՝ որ պարզեւ առած գրքերով էր կազմել. մի ոսկի ժամացոյց ունէր, որ նահանգապետն էր բաղինել գեղեցիկ պղեստների ունէր. բոլորը ծախել տուեց մի փոքրիկ առևտուրի ձեռք զարկելու հա-

ՄԵՄԱՒՈՐՆԵՐԻՆ, ՄԵՐԵՐԻՆ ԵՒ ԲԱՐԵՐԱՐՆԵՐԻՆ
 ԱՆԿ ՅԱՐԳԱՆՔԸ
 Կանգանձինք որոնց համար այնպիսի զգացմանք պիտի ունենանք որ քիչ թէ շատ ման է որչի՞ ահան զգացմունքին:
 Օրինակ՝ պէտք է յարգենք մեր գլխաւորներին, դպաւորներին, և բոլոր հասարակական իշխանութեան աւանդապահներին: Եւ ինչպիսիք արքայազններն և ստրուկներն, մեր մանկութիւնից սկսած, մեր յարգանքի առարկան պէտք է լինին. բաւական չէ նոցա անձը յարգելը, այլ և պատուիրաններին հետեւել հարկ է. պէտք է երկիւղած ուշադրութեամբ լսենք աստուածային բարոյականին որ նոքա մեզ քարոզում են Աստուծոյ կողմից. մեր բարքը մանաւանդ ըստ այնմ պէտք է յարմարենք:
 Դաստիարակիչը, որ մեր մանկութեանը խնամք է տարել, մի պաշտօնեայ է՝ որին Աստուած ու մեր ծնողքը միջնորդ են ընդունել մեր խելքը զարգացնելու ու մեզ բարի վարքի վարժեցնելու համար. այդ պատճառով՝ նա մեզ համար թանգագին պէտք է լինի: Մեր դաստիարակութիւնը աւարտելուց յետոյ,

մենք նորա համար մեր սրտում մի վառ և քրատագրիտութիւն պիտի պահպանենք, և որ մեր առջնա յարումն ու մեծարանքը նշաններով պիտի անպայման ցանկենք:
 Մի մանուկ իրնից հասակաւորներին բոլորին պէտք է յարգ տայ, նա մանաւանդ կին մարդոց ու ծերերին:
 Նա որ ծիծաղում է ծերի վրայ՝ մի չար ու անպիտան է, որին բոլոր աշխարհ անարգում է: Ծերերին պէտք է ամենայն կերպով պատուել, պէտք է սիրով համբերել նոցա տ հաճ բնաւորութեանը՝ որ նոցա ծեր հասակի արգասիքն է, ամենուրեք պատուականագոյն տեղերը նոցա հրամցնել, և ցոյց տալ նոցա ամէն տեսակ պատկառանք և ակնածութիւն:
 Եթէ մէկը մեր հօր կամ մօրը բարիք է արել, չմոռնանք բնաւ նորա յիշատակը: Թող այն անձը մեր մասնաւորապէս յարգանքի առարկան լինի:
 Մի որդի իւր հօր կամ մօր սխիւ բաժանորդ պէտք չէ լինի, որովհետեւ կրօնքը մեզ արգելում է անել որ և է մէկին, և հրամայում է ներել նոցա՝ որ մեզ չարիք են հասուցել, բայց պէտք է կցորդ լինի այն երախտագիտու թեան՝ որ մեր ծնողք ուխտել են իրենց բարեբարներին, և այդ երախտագիտութեան

— անտոյնցմ պա ցմ ՆՈՐԱՏԻ ԱՇԱԿԵՐՏԸ —

— զի ցանախն զո սխչնի լոյրոցոց ճառարտեանց մից

— զիս **Աղելայից** կայէթ բղանսնում էր ծնեւածի և մի աղբատ զինուորականի աղջիկ էր: սղայս վարագ

Քորան՝ իւր մանուկ հասակում՝ խնամեց տիկին Գիւկօրմիէր, որ սպիտակեղէնի՝ բանւոր վարպետ էր փարիզում, և որ նորան ուսոյց իւր արհեստը:

Աղելայիտ իւր բարեբարի շնորհիւ զերազանց բանւոր դառնալով՝ հաստատուել էր իւր ծնընդեան քաղաքում, ուր պատուաւոր կերպով անում էր իւր ապրուստը:

Յետոյ իմանալով որ տիկին Գիւկօրմիէր հիւանդացել է, թողել էր ամէն բան ու նորա մօտ էր վազել:

Տիկին Գիւկօրմիէրի առողջութիւնն երթալով օր աւուր վատթարանում էր: Կուրծքը բռնուել էր, ու ստէպ խեղդում էր տառապեալ կնկան. վերջապէս խեղճն անկարացաւ աշխատելու և ծանր բան աւնելու:

Գործատան և անտեսութեան հոգացողութեան բեռը ամբողջապէս Աղելայիդի վրայ ընկաւ, որն որ ջերմ և ղթալիր երախտազիտութեամբ մատուցա-

նում էր հիւանդին բոլոր այն ծառայութիւնները որ նորա զրութիւնը պահանջում էր:

Հիւանդութիւնն որ երկար քաշեց՝ տիկին Գիւկօրմիէր էլ այնտեղն հասաւ՝ որ չկարաց այլ ևս իւր պէտքերը հոգալ. հարկադրուեցաւ համարեա բոլոր իւր կաքերը մէկը միւսի ետեւից ծախել. ինչ որ կար տան մէջ տան բարեկեցութեանը նշան՝ անհետացաւ. փոքր յետոյ տունը յետին չքաւորութեան ու թշուառութեան պատկեր էր ներկայացնում:

Աղելայիտ ամէն բանի հասաւ. նա չէր վհատուած՝ ոչ յանձն առած նեղութիւններից, ոչ ստօրեայ ինքնակամ արած զոհերից. աշխատանքից ձեռք էր վերցնում միայն այն ժամանակ՝ որ հարկաւոր էր լինում հիւանդին խնամել, և յաճախ զիշերներն ստիպուած էր վեր ելնել պէտք եղած դիւրութիւնները նորան մատուցանելու համար:

Պատահում էր երբեմն՝ որ հիւանդը լաւ էր դառնում ու գործը դարձեալ ձեռք էր առնում, բայց տեսութեանը նուազութեան պատճառով վատ էր կարում, որ Աղելայիտ ստիպուում էր քանդել՝ նորից սկսելու: Բայց այդ բանն անելու համար՝ իւր վարպետից գողտուկ էր քաշուում, կամ սպասում էր մինչ նա քնի, որպէս զի իւր արածից նա չլըռտանայ:

Խեղճ հիւանդը մահաց առաջ ութ ամիսը շարունակ անկողնում մնաց: Ազելայիա չհաւանեցաւ որ նորան կարօտների հիւանդանոցը տանեն, սպառեց իւր սեփական միջոցները, իւր կայքերը գրաւի դրեց՝ կարևոր ծախսերը հոգալու համար:

Բայց այդ անձնուիրութիւնը մեր աչքում զարմանալի երեցնողը չէ թէ նորա մի քանի շաբաթուայ, մի քանի ամսուայ տեւականութիւնն է, այլ շարունակ տասն և երկու տարուանը, և առաքինի աղջկայ եռանդը մի բողբէ անգամ այդ ձիգ ժամանակամիջոցում չթուլացաւ:

ՎԵՐՁԻՆ ԽՐԱՏՆԵՐ ԳԵՐԻԱՍՏԱՆԸ

Մեր մանուկ աշակերտներին յատկացուած զրքոյիլը աւարտելուց առաջ, նոցա ապագայի համար մի քանի խիստ կարևոր դիտողութիւններ եմ անելու իրենց:

Առաջինն այն է որ՝ իրենց ծնողքի առաջ միշտ հեղ ու երկիւղած լինելով, անզգայի կերպով առանց ճգունքի մարդուս վայելացնող համարեա բոլոր յատկութիւնները ձեռք կը բերին:

Եւ արդարև, գերդաստանական առաքինութիւնները միւս բոլոր առաքինութիւնների վարժմանքներն են. գերդաստանական պարտաւորութիւնների կատարումը միւս բոլոր պարտաւորութիւնների կատարումը հեշտացնում ու քաղցրացնում է:

Ի բնուստ ամենայն պարկեշտ բանի վարժ հոգին յետոյ չէ ճկիլ ուրիշ ուրիշ սովորութիւնների առաջ. տղայութ յստակ և սուրբ միտմունքներով սնուած հոգին՝ ուրիշ սնունդ այլ չի ուզում:

Օրինակ՝ իւր գերդաստանին նուիրուած մարդը սիրում է աշխատութիւն ու դարձ ունէութիւն, որոնցով կարող է գերդաստանին դիւր կենցաղ պատարաստել. սիրում է կարգ ու անսխառութիւն՝ որոնք

միայն են այդ դիւր կեցութիւն ապահովողները:

Այլպէս ուրեմն գերդաստանական առաքինութիւնների գործադրութիւնը նպաստող է բոլոր գովելի ազնուական զգացմունքների ծիւ առնելուն:

Նա է յստակ և միշտ նորանորոգ զուարճութիւնների աղբիւրը: Նորանով է մանաւանդ մարդս արժանաւորապէս ժառանգում բաղդ և վայելում:

Բաղդը հասարակօրէն առաքինի և միաբան գերդաստանի վարձքն է:

Ի՞նչպէս կարելի կըլինի մեզ դրսումը անկեղծ ու աւական սիրելութիւններ գտնել, եթէ ուրանայինք մենք մեր ներքինները՝ որ Աստուած ստեղծել է մեզ համար: Արժանի կըլինէինք երբէք ճշմարիտ զուարճութիւններ վայելելու, եթէ անզգայ մնայինք այնքան անբիծ զուարճութիւնների առաջ, որոնց աղբիւրը բնութիւն ու առաքինութիւնն են:

Ուստի գերդաստանից զուրս բաղդաւորութիւն խնդրողը՝ ուրիշ տեղ նորան չի հանդիպիլ:

Եւ ո՞ր յոյս ունի գտնելու: **Խաղ** ու խնդումի մէջ՝ աղմկալից զբօսանքների մէջ:

Բայց խաղն ու խնդումը մեզ մի քանի բոպէ են զուարճացնում միայն. աղմկալից զբօսանքները մեզ միայն թմբերեցնում են և դատարկ են թողնում սիրաւ:

գերդաստանի վայելքներն ընդհակառակն լիապէս զօհ են անում սիրաւը. նոցա հրապոյրը նուազիւ չի երբէք, որքան աւելի ճաշակեա այնքան աւելի ճաշակիլ կ'ուզեն սա: Թամանակը սոցա զինը մեր աչքում աւելի կը բարձրացնէ՝ միւսների կեղծութիւնները մեր առջև մերկացնելով:

Սոցանից դուրս մարդ անցաւոր և անստոյգ վայելքներ կըգտնէ, կեղծ զուարճութիւններ կը վայելէ:

Անկեղծ սիրելութիւններ, իսկական զուարճութիւններ գերդաստանի մէջ են, բարի և առաքինի ծնողքի մօտ, խնամոտ ու գթոտ ամուսնի մօտ, պարկեշտ և հեղ զաւակների մօտ, արիւնով ու սիրելութեամբ մեզ կըզայր դարձած բարեկամների մօտ:

Այդ սիրելի էակները ամօքում են մեր վըշտերը իրենց մասնակցութեամբը. մեր խնդութիւնները, որ նոցա ևս են լինում խնդութիւն, երկպատիկ աճում են մեզ համար:

Ո՛ւր է թէ այս վերջին դասը դրոշմուած ֆնայ այն սիրելի երեխաների յիշողութեան մէջ, որոնք իրենց նորածին միտքը կրթելու զիտմամբ այնքան մտադրութեամբ իրենց համար կարգաւորու են որ արուեստի աշակերտութիւնն արին, իրենց պարտաւորութիւնների ուսմունքովը:

Ո՛ւր է թէ որդիական սէրը, որով լն է մար-

1-50

«Ազգային գրադարան»



NL0221988

